



# ՄԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Քաղաքական կուսակցութիւններն յԵՐՈՎԱՆ  
 և յԱՎԵՐԻԿԱ (Բ.) ..... Բ. Ք.  
 ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ Ի ԿՏՈՒՅ ԱՆԱՊԱՏ ..... ՇԱՀԷՆ  
 ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ. Ոսկի Զէնիկ (ՊՈՒՇԿԻՆ) ..... ԳՅՄԱՌ—ՔԱԹՈՒՊԱ  
 ՎԷՊ. Մատլէնի յեղքը (ԲՕԼ ԱԼՊԱՆ) Թարգմանութիւն .....  
 ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ. Արտաքին, Ներքին, Ազգային .....  
 ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԶԱՎԷՅ ՏԸ ՄՕՆԹԷԲԷՆ) Թարգմ. .... Մ. ԶՈՊԱՆԵԱՆ

### ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ ԵՆ ՔԱԼԱՈՆԵՐՈՒ — տարեկան ..... Կէս ոսկի Օսման .  
 » » վեցամսեայ ..... Քառ » »  
 Մէկ ԹԵՐԹԻՆ զինն է ..... 60 փարայ  
 Օտար քաղաքաց համար տարեկան ..... 12 ֆրանք  
 » » վեցամսեայ ..... 6 »  
 Թղթատարութեան ծախք տարեկան ..... Դան. արծ. 15  
 վեցամսեայ ..... » » 7 1/2

Մասիսի խմբագրութեան ուղղեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է  
 ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս Լրագրաց  
 Դալարի, Նորատուրկեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

1884

# ԴՐԱՄԱԿԱՆ

## ՂԱՒԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 49 Հոկտեմբեր

### ԸՆԹԱՅՔ ՓՈՒՍԱՆԱԿԱԳՐՈՅ

|                                |           |
|--------------------------------|-----------|
| 3 ամիս Լոնտրայի վրայ (պանդայի) | 440 1/8   |
| 3 » » » (վճռ. կնի)             | 409 7/8   |
| 3 » Բարի Լի » (պանդայի)        | 22 90     |
| » » » (վճռ. կնի)               | 22 97 1/2 |

### ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Գոնսոլիտէ

|                                        |        |
|----------------------------------------|--------|
| Երէկ Երեկոյ գոցուեցաւ (Գ. Կ.) ԳՏԿն.... | 8 37   |
| Պորսային գոցուելէն վերջը » » ...       | 8 38   |
| Բերայի մէջ » » ...                     | —      |
| Առաւօտուն բացուեցաւ » » ...            | 9 4    |
| Բարձրագոյն դին » » ...                 | 9 2    |
| Նուազագոյն » » ...                     | 9 4    |
| Կէս օրին » » ...                       | 9 2    |
| Իւնիֆիէ Եգիպտական » » ...              | 71 45  |
| Երէկ Երեկոյն գոցուեցաւ » » ...         | 71     |
| Բերայի մէջ » » ...                     | —      |
| Այս առտու բացուեցաւ » » ...            | 71 45  |
| Կէս օրին » » ...                       | 71 25  |
| Հէվալէսիզ » » ...                      | 47 1/2 |
| Բէբօր Գոնսոլիտէի » » ...               | —      |
| » Իւնիֆիէի » » ...                     | —      |
| Փոխառութիւն 1863 (Գ. Կ.) » » ...       | 72     |
| » 1865 » » ...                         | 56     |
| » 1869 » » ...                         | 50     |
| » 1873 » » ...                         | 45     |
| Պոն տիւ Թրէշօր » » ...                 | 21     |
| Բուսէլիի Երկաթուղի » » ...             | 43 75  |
| Օպլիկասիօն ալ Բրիտիթէ » » ...          | —      |
| Բաժնեթուղթ Լաւրիօն » » ...             | 77     |

### ԲԱԺՆԵՏՈՐՍՔ

|                               |                      |
|-------------------------------|----------------------|
| Սօսիթէ Ժէնէրալ » » ...        | Անգլ. Լ. Բ. ... 3 30 |
| Փրէտի Ժէնէրալ (Գ. Կ.) » » ... | Օսմ. Լ. Բ. ... 7     |
| Պանք ալ Գոնս » » ...          | » » ... 5 30         |
| Սօս. Շանթ է վալէօր » » ...    | Օսմ. Լ. Բ. ... 3 28  |
| Թրամուէյ » » ...              | » » ... 280          |

### Ընթացք դրամոց

|                           |        |
|---------------------------|--------|
| Օսմանեան ոսկի » » ...     | 400    |
| 20 Ֆրանքոն » » ...        | 87 38  |
| Անգլիական ոսկի » » ...    | 440 4  |
| Բօլ Իմբերիալ » » ...      | 90 42  |
| Քրիմի » » ...             | 54 25  |
| Ռուսկի Թղթադրամ » » ...   | 8 90   |
| » արծաթ » » ...           | 89 30  |
| Ֆիօրին » » ...            | 9      |
| Մէճ. արծ. (տարբ.) » » ... | 408    |
| Վեցնոց » » ...            | 403 5  |
| Հինգնոց » » ...           | 403 40 |
| Մէթալիք » » ...           | 99     |
| Պղինձ » » ...             | 800    |
| Թղթադրամ » » ...          | 3000   |

# ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 30 Հոկտեմբեր ժամ 5 վայր. 45 Երեկոյ

|                                     |           |
|-------------------------------------|-----------|
| Անգլ. Գոնսոլիտէ գոցուեցաւ » » ...   | 100 11/16 |
| Օսմ. » » բացուեցաւ » » ...          | 8 1/8     |
| » » » գոցուեցաւ » » ...             | 8 1/4     |
| Օսմ. փոխառութիւն 1865 » » ...       | 44 1/4    |
| » » 1869 » » ...                    | 9 7/8     |
| » » 1871 » » ...                    | 68        |
| » » 1872 » » ...                    | 20        |
| » » 1873 » » ...                    | 8 5/4     |
| Փոխառութիւն » » 1877 » » ...        | 80        |
| Պանք Օթօման » » ...                 | 42 7/8    |
| Ռուսական փոխառ. 73 (Գ. Կ.) » » ...  | 95        |
| Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ) » » ... | 64 5/4    |
| » առանձն. (Բրիտիթէ) » » ...         | 86        |
| Տայրա Սանիէ » » ...                 | 60 1/4    |
| Տօմանիալ (փոխառ. Բօշիլտ) » » ...    | 87        |
| Հունգարական պարտաթուղթ 1877 » » ... | 402 5/8   |
| Փոխանակութիւն Բարիդի վրայ » » ...   | —         |

Վիեննա, 30 Հոկտեմբեր ժամ 4 Երեկոյ

|                                        |            |
|----------------------------------------|------------|
| Փոխանակութիւն Լոնտոնի վրայ » » ...     | 422 60     |
| Օսմանեան Երկաթուղի » » ...             | 20 70      |
| Բարիզ, 30 Հոկտ. ժամ 3 վայր. 45 Երեկոյ  |            |
| Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0...բաց » » ... | 409 42 1/2 |
| » » 3. 0/0...բաց » » ...               | 78 22 1/2  |
| Օսմանեան Գոնսոլիտէ բացուեցաւ » » ...   | 8 25       |
| » » գոցու. (Գ. Կ.) » » ...             | 8 25       |
| » » 1865 » » ...                       | 56         |
| » » 1869 » » ...                       | 50         |
| » » 1873 » » ...                       | 44         |

|                                        |         |
|----------------------------------------|---------|
| Օսմանեան Երկաթուղի » » ...             | 44 25   |
| » Բէթիի Բաժնեթուղթ » » ...             | 517 50  |
| Պանք Օթօման » » ...                    | 574 25  |
| Գրէտի Լիօնէ » » ...                    | 528 75  |
| » Ֆոնիէ » » ...                        | 4287 50 |
| Բաժնեւորման Լիօնի (Գոլբ. Կար.) » » ... | 4235    |
| Սուէզի ջրանցք » » ...                  | 1897 50 |
| Ռուսական 5 0/0 1877ի » » ...           | 99 1/2  |
| Խաղաղական Ռանթ » » ...                 | 96 60   |
| Եգիպտական միացեալ գոց » » ...          | 323 75  |
| Սպանիական (արտաքին) » » ...            | 59 5/8  |
| Բրիտիթէ Թիւք » » ...                   | 380     |
| 5 0/0 Հելլենական » » ...               | 365     |
| 2էք Լոնտոնի վրայ » » ...               | 25 24   |

# ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Հոկտեմբեր 29 ժ. 10, 4 30

|                                |            |
|--------------------------------|------------|
| Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0 » » ... | 409 24 1/4 |
| Օսմանեան » » ...               | 8 30       |
| Եգիպտական միացեալ » » ...      | 326 25     |

# Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

33 րդ ՏԱՐԻ

1884 ՀՈԿՏԵՄԲԵՐ 20

ԹԻԻ 3740

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՆ  
ՅՆԵՐՈՊՈՒՆ ԵՒ ՅՄԱՆԵՐԻԿԱՆ

Ք.

### ԴԵՐՄԱՆԻՍ

Գերմանիոյ ներքին գործոց, Դաշնակցա-  
յին Խորհրդոյ և Նրեպիտիսանաց Ժողովոյ վի-  
ճաբանութեանց և գերմանական կուսակ-  
ցութեանց կռիւներուն վրայ շատ չխօսուիր  
Կ. Պոլսոյ լրագրաց մէջ : Թէ՛ աստ և թէ՛ ու-  
րիշ մեծ մայրաքաղաքաց մէջ, Ֆրանսայի և  
Անգլիոյ ներքին գործերն աւելի ուշադրու-  
թիւն կը դրաւեն բարդատապէս : Առանց  
պատճառի չէ այս : Ֆրանսայի և Անգլիոյ  
մէջ Խորհրդարանք և կուսակցութիւնք ու-  
նին ա՛յնչափ զօրութիւն և կը զբաղին ա՛յն-  
պիսի խնդիրներով որ կրնան տապալել օր-  
ուան կառավարութիւններն և յարուցանել  
տագնապ մը, որ կրնայ ազդել Ներքինոյ ընդ-  
հանուր վիճակին վրայ : Թէ ի՛նչ ուղղու-  
թիւն պիտի ստանայ եւրոպական աշխար-  
հավարութիւնն և թէ ո՛ր աստիճան հաւա-  
նախանութիւն կայ խաղաղութեան պահ-  
պանման, փոքր ի շատէ կարելի է գուշա-  
կել՝ զիտեւով Ֆրանսայի և Անգլիոյ Խոր-  
հրդարանաց վէճերն ու կուսակցութեանց  
փոխադարձ դիրքը : Բայց Գերմանիոյ մէջ  
Խորհրդարան և կուսակցութիւնք չունին  
այն նշանակութիւն զոր ստացած են արեւ-  
մեջտեան միւս երկու ազգերուն մէջ : Գեր-  
մանական Խորհրդարանը չի կրնար տապա-

լել Նախարարութիւն մը, և Կայսրութեան  
ճակատադիրն ու եւրոպական խաղաղութեան  
կամ նոր պատերազմի մը որոշումը կախեալ  
չեն Պերլինի Ազգային Ժողովոյն վճիռներէն :  
Գերմանիա սահմանադրական միապետու-  
թիւն է արդարեւ : Բայց սահմանադրական փա-  
պետութիւն և Խորհրդարանական կառավարու-  
թիւն հոմանիշ բառեր չեն : Ուր որ Նախա-  
րարութիւնը պատասխանատու է ուղղակի  
առ Խորհրդարանն, և կը կազմուի կամ կ'իյ-  
նայ Խորհրդարանին մէկ քուէով, կ'ըսենք  
թէ հոն կառավարութիւնը Խորհրդարանա-  
կան է : Այսպէս է յԱնգլիա և ի Ֆրանսա :  
Բայց գերմանական Սահմանադրութիւնն ա-  
ռաւել սահմանափակ է : Պիզմարք իշխանն  
և իւր պաշտօնակիցք պատասխանատու են  
միայն առ Վիլհէլմ Կայսրն, յորմէ կը  
ստանան իրենց անուանում, և պաշտօն կը  
վարեն ցորչափ կամի Ն. Վեհափառութիւն :  
Գերմանիոյ Նրեպիտիսանք կրնան աւելի կամ  
նուազ ազարդիւն քննադատութիւններ  
ուղղել կայսերական կառավարութեան ըն-  
թացից դէմ, և Պիզմարք իշխանն ազատ է  
նոյն միջոցին ունկնդիր լինել, կամ քաջուիշ-  
երթալ յարակից ծխարանը : Բայց դէպքերն  
ա՛յնպէս բերած են որ գերմանական Խոր-  
հրդարանը կը հսկակերպի այսպիսի խո-  
նարհապոյն դիրքի մը : Ազգային միութիւնն  
յառաջ եկաւ և Կայսրութիւնն հիմնուեցաւ  
հակառակ Խորհրդարանական դժուարու-  
թեանց : Ազգն առաւել արդիւնք տեսաւ  
սա երեք մեծ մարդոց, Վիլհէլմ Կայսեր,  
Պիզմարք իշխանին և Մուլքէ կոմսին միա-  
բան գործողութենէն, քան բոլոր այն Խոր-  
հրդարանաց վէճերէն որք՝ զանազան ան-  
ուանց ներքեւ՝ իրարու յաջորդած են ի Ֆր-

րանք՝ Թորդ կամ ի Պերլին, յորմէ հետէ Սահմանադրութիւն հաստատեցաւ ի Բրուսիա և Գերմանիոյ այլ մասանց մէջ: Ուստի, երբ Վիլհէլմ Կայսրն և իւր ամենադօր Նախարարապետ կը հակառակին անգլիական կամ Ֆրանսական դրութեամբ խորհրդարանական վարչութեան հաստատման, Ազգն իւր մեծամասնութեամբ առաւել իրաւունք կուտայ անոնց, քան իւր սահմանադրասէր Ներսիփոխանաց որք կ'ուզեն Կատարելի մը կամ ժիւլ Ֆերրիի մը գերը տալ Պիլմարք իշխանին: Հետեւապէս, Գերմանիոյ աշխարհավարութեան և Ներսիփոյ վրայ ասոր հաւանական ազդեցութեան նկատմամբ շատ լոյս չենք կրնար քաղել՝ քննելով Պերլինի Խորհրդարանին և իւր կուսակցութեանց վէճերն, որք այսպէս յաջ ստարաց յոյժ կը կուսանեն իրենց կարեւորութիւն: Խորհրդարանը գրէթէ միայն ներքին խնդրովք կը զբաղի: Բայց Պիլմարք իշխանին արտաքին աշխարհավարութիւնն ամենեւին կախուած չէ այս ներքին խնդրոց ստացած վիճակէն: Այս է պատճառն որ մեք եւս այնքան յաճախակի չենք խօսիր Գերմանիոյ ներքին գործոց վրայ:

\*  
\* \*

Վիլհէլմ Կայսրը Բրուսիոյ Թագաւորն է և Գերմանիոյ Կայսրը: Պերլին կեդրոն է երկու տարբեր Խորհրդարանաց, մին՝ Բրուսիոյ, միւսը՝ Գերմանիոյ: Բրուսիոյ Ներսիփոխանաց ժողովն (Նախարար) աւելի անկարեւոր է մեզ համար, ըստ որում կը զբաղի միայն Բրուսիոյ Թագաւորութեան ներքին գործերով, և բնաւ չի քննէր արտաքին աշխարհավարութեան վերաբերեալ խնդիրներ: Աւելի կարեւոր է՝ համայն գերմանական ազգէն ընտրուած Ներսիփոխանական ժողովը, (Ռայխարայ): Գերմանական զանազան Կառավարութեանց Պատուիրակներէն բաղկացեալ Դաշնակցային Խորհուրդ մ'ալ (Պանդերախ) կայ, որ տեսակ մը Ծերակոյտ է: Կուսակցութիւնք, յորս բաժանեալ է գերմանական ժողովուրդն, ազատ ասպարէզ կը գտնեն սակայն Ներսիփոխանաց ժողովոյն մէջ միայն:

Այս ժողով կը բաղկանայ 397 անդամներէ: Թէեւ Գերմանիա աւելի բնակիչ ունի քան Ֆրանսա կամ Անգլիա, իւր Ներսիփո-

խանք թուով շատ պակաս են արեւմտեան երկու ազդերուն Ներսիփոխաններէն: Սակայն Գերմանիոյ Ներսիփոխանք բաղկատապէս աւելի բազմաթիւ կուսակցութեանց բաժնուած են:

Քննելով այս կուսակցութեանց յարաբերական դիրքը, կը գտնենք ուրիշ տարօրինակ իրողութիւն մը որ յատուկ է Գերմանիոյ: Սովորաբար, Խորհրդարան մը կը բաժնուի երկու մեծ կուսակցութեանց, որոց մին կառավարութեան կողմը կը բռնէ, միւսն ալ կը կատարէ ընդդիմադրի պաշտօնն, և կառավարական կուսակցութիւնը թուով միշտ աւելի է հակառակ կուսակցութեանէն: Գերմանիոյ Ներսիփոխանաց ժողովոյն մէջ ասոր հակառակը կը տեսնենք սովորաբար 397 Ներսիփոխաններէն միայն 81 հոգի յայտնապէս կուսակից են Պիլմարք իշխանին և նորա նախագահութեամբ գործող նախարարութեան: Ասոնք կը յորջորջուին Պահպանողական, երկու խմբակներու բաժնուած: Մնացեալ 316 Ներսիփոխանք ի պաշտօնէն զնդդիմադիր են: Բայց ասոնց մէջ պէտք է որոշել Ազադականներն, որք 177 հոգի են, — և Ազատականաց մէջ ալ պէտք է զանազանել Ազգային-Ազադականներն, Յասարակականներն և Ընդդիմադրականներն, — ինչպէս նաեւ Կաթոլիկներն, որք են 98 հոգի: Ընդդիմադիր ընդհանուր անուան ներքեւ կը մնան դեռ 41 Ներսիփոխանք: Սոցա 16ն են Բուլնացիք, 3ը՝ Կէլթեր, կամ գերմանական անկախ Պետութեանց գոյութեան կուսակիցներ, (1) 2 Դանիացիք, (Շէյդիլիկ-Հոլզայնի գրաւեալ դաւաճներէն), և 15 Ալզաս-Լոթինցիք:

(1). — Կելթերը Պապին իշխանութեան և իտալական քաղաքացիութեան հաւատաց ինքնօրինութեան կուսակիցներն են ընդդէմ Գերմանիոյ Կայսերաց իշխանութեան, որոյ կուսակցք կը կոչուէին Կաթոլիկներ: Այս երկու հօջք կուսակցութեանց կռիւները շատ կարեւոր տեղ մը կը բռնեն խաղիւղ և Գերմանիոյ միջին դարուց պատմութեան մէջ: — Այժմ միայն «Կելթ» անունը գործածական է, ցոյց տալով համար գերմանական կուսակցութիւն մը, որ փոքր վեհապետութեանց անկախութեան պահպանումը կ'ուզէ: օրինակի համար, Հանովերի Թագաւորութեան շարունակութիւնն, որ, ինչպէս յայտնի է, Բրուսիոյ անցած է, իւր երկու միլիոն բնակչօք: Կելթ Ներսիփոխանաց շատն Հանովերցի են, և չեն սքօզեր բաժանման և անջատման հակամարտութիւնները զորս կը տածեն ընդդէմ նորահաստատ Կայսրութեան:

Արդ, յայնմ կը կայանայ Պիլմարք իշխանին ճարտարութիւնն, որ այսչափ սակաւթիւ կուսակիցներ ունենալով հանդերձ, երբ օրէնք մ'ունենայ խորհրդարանին քուէարկել տալու, կամ ներքին կարեւոր խնդրոյ մը մէջ պէտք տեսնէ Նրեստի խանութեանէն ոյժ գտնելու, ընդդիմադիր հանդիսացող բաղմաթիւ կուսակցութեանց միոյն կամ միւսին հետ գաշակեցելով զանոնք իրարու դէմ յարուցանելու և իւր ծրագիրը քաղցնելու միջոց կը գտնէ միշտ: Պիլմարք իշխանը տիրած է խորհրդարանին՝ օգուտ քաղելով անոր ներքին բաժանումներէն: Զայս բացատրելու համար, պիտի քննենք համառօտիւ գերմանական դիւսաւոր կուսակցութեանց նպատակի և ուղղութեան տարբերութիւնները:

Պահպանողական Պիլմարք իշխանին և Վիլհէլմ Կայսեր աշխարհավարութեան անձնուէր պաշտպաններն են միշտ, ուստի և առանց գիտարութեան կը նուիրեն իրենց աջակցութիւն:

Ազատական կը պահանջեն վարչային ապակեղրոնացում, ազատ-փոխանակութիւն և խորհրդարանական կառավարութիւն: Կուլեն որ կառավարութիւնն ըստ կարի քիչ խառնուի ժողովրդեան գործոց, և անտեսական և վարչային սկզբանց մասին, Անդլիացւոց տուած օրինակը նախամեծար կը համարին: Յառաջդիմական խմբակն Ազգային-Ազատական խմբակէն աւելի ջերմապէս յարեալ է այս սկզբանց:

Ընկերակրական ընդհանրապէս կը ջատագովեն ճշդիւ ներհակն այս սկզբանց: Կուլեն որ Պետութիւնն ատանձնէ իբրեւ հայր մը հոգալ ժողովրդեան, մանաւանդ չքաւոր գասուց պէտքերն, և մաքսային պաշտպան-գրութեամբ անլրանաց գները սուղցնելով, ոյժ տայ ներքին արտադրութեանց, և բարձր պահէ գործաւորաց թոշակը: Մինչ Ազատականք կը շատանան զանազան դասուց մէջ օրինական հաւասարութիւն և ազատ մրցում պահանջելով, Ընկերակրականք, քայլ մ'եւս յառաջ երթալով, կ'ըսեն թէ բնութեամբ զօրաւոր և տկար եղողներու միջեւ օրինական հաւասարութիւն ուրիշ բան չի նշանակեր բայց եթէ տկարն յանձնել զօրաւորին քմահաճոյից և սղատօրէն մրցելով զօրաւորն, այսինքն դրամատէրը կամ ուսեալ

մարդը շուտով կ'ընկճէ տկարը կամ տղէտն, որ է գործաւորն: Ուստի, Ընկերակրականք կը պահանջեն որ ազատ մրցումը վերցուի, և աղքատ դասերն հարստաց և կարողաց դէմ պաշտպանուին յատուկ օրէնքներով:

Կաթոլիկներն սկզբամբ պահպանողական են. բայց մեծ խնդիր մը դիմենք կը բաժնէ բողոքական Պահպանողականներէն: Այս է կղերային խնդիրը: Բողոքական Բրուսիա երբ եղաւ քաղաքական կեղրոն համայն Գերմանիոյ, իւր Նախարարք սկսան բռնել Վատիկանի և կաթոլիկ կղերին յոյժ հակառակ ընթացք մը: Այս հակապապական քաղաքականութիւն 1874ին իւր գաղաթնակէտ հասաւ Պ. Ֆալքի Մայիսեան հռչակաւոր օրէնքով, որով կաթոլիկ կղերը կը զրկուէր դպրոցներն ուղղակի վարելու իրաւունքէն և Պապին ո'չ եւս առջի թոյլտուութիւնը կը լինէր ըստ կամս տնօրինութիւններ ընելու Գերմանիոյ կաթոլիկ կղերին վրայ: Կաթոլիկ Նրեստիսանք բնականապէս հակառակ են այս օրինաց:

Յրանքօ-գերմանական պատերազմէն յետոյ, Պիլմարք իշխանն զբաղած էր ընկճելու իւր ազգային աշխարհավարութեան կաթոլիկ հակառակորդները: Գերմանիոյ Կաթոլիկներն ընդհանրապէս հաշտ աջօք չէին տեսներ բողոքական Բրուսիոյ ստացած քաղաքական առաւելակըութիւնը: Նոքա առաւել ուրախ կը լինէին եթէ այս առաւելակըութիւն կաթոլիկ Աւստրիոյ ձեռքը մնար: Եթէ չէին կրնար կասեցնել դէպքերու ընթացքը, դէթ առիթ չէին միայնցնէր տհաճութիւն ցոյց տալու Բրուսիոյ ամենազօր Նախարարապետին զանազան խորհրդոց դէմ: Պիլմարք իշխանը Ֆալքի օրինօք ուղեց ջախջախել զանոնք, և այս մասին Ազատականաց կողմէ գտաւ սրտադին աջակցութիւն մը: Այսպէս, բողոքական Պահպանողականք և Ազատականք օժանդակեցին Իշխանին՝ ջախջախելու Կաթոլիկներն:

Եւ յետոյ. - միեւնոյն գէնքով նոր Մաքսիս-վիլն հարուածեց նաեւ Ազատականները: Պիլմարք իշխանն, ի բնէ միապետական և հակառակմանադրական, որ ամեն առթիւ յոյժ մտացի կերպով հեղինած է իւր հայրենակցաց խորհրդարանական հակամիտութիւններն, իւր բոլոր սրտով կ'ատէր Ազատականները: Նախարարական պատասխա-

նստուկութիւն հաստատելու աղատական առաջարկներ նորա ջիղերուն կը դպչէին: Տընտեսական սկզբանց մէջ ալ հակառակ էր Ազատականաց: Գերմանացի ժողովուրդը չուտով կ'աճի: Ֆրանսացւոյն պէս ամուլ չէ: Բայց քանի որ բնակիչք կը բաղմանան, աղքատներն ալ կը շատնան: Վերջին տարիներս գործաւորաց խնդիրը մեծապէս զբաղեցուց ծերունի Կայսրն և իւր Նախարարապետ: Երկուքն ալ կը խորհէին թէ առհայրենիս իրենց ծառայութիւնք չպիտի լինէին կատարեալ մինչեւ որ չկարգադրէին աղքատ դասուց բարեկեցութեան խնդիրն եւս: Ասոր դարմանը Պիզմարը իշխանը գտաւ մաքաային պաշտպան-դրութեան և Պեթախ Բնկերպար-Ռեան մէջ: այսինքն՝ ի դիմաց կառավարութեան ընդունեց Բնկերպարականաց շատ մը սկզբունքներն: Իւր ներքին ծրագիրը, որը մասամբ յաջողած են արդէն, կը կրեն Բնկերպարական դադարաւորաց դրոշմն: Արդ, որպէս զի իւր այս գաղափարաց վրայ հիմնեալ ծրագրերը կարենար ընդունել տալ Խորհրդարանին, ճարտարամիտ Նախարարապետը ջանահնար եղաւ իրեն հետ հաշտեցնելու Կաթոլիկներն: Հրաժարեցուց զՊիզմար, չափաւորեց Մայիսեան օրէնքն, և վատիկանի հետ բանակցութեանց սկսաւ, Գերմանիոյ կաթոլիկ կղերին առջի առանձնաշնորհմանց մէկ մասը վերադարձնելու համար: Կաթոլիկ Երեսփոխաններն, որք Ազատականներէն լուծելիք վրէժ մ'ունէին, և Բնկերպարականք, որք կը տեսնէին թէ կառավարութիւնը կ'ընդունէր իրենց սկզբանց դէժ մի մասն, յայնժամ Պիզմարը իշխանին հետ միացան ընդդէմ Ազատականաց: Այս դաշնակցութիւն աղետաբեր եղաւ Ազատականաց: Սորա ֆրանքո-գերմանական պատերազմէն առաջ Գերմանիոյ մէջ հզօրացոյն կուսակցութիւնն էին: Համայն գերմանական ազդն անոնց վրայ գրած էր իւր յոյսն: Բայց երբ այնպիսի փայլուն յաջողութեամբք պատկեցաւ Պիզմարը իշխանին աշխարհավարութիւնն, որուն հակառակորդ էին իրենք, Ազատականք շատ ծախսող զիրքի մը մէջ ինկան: Ոչ եւս կրնային դէմ դնել Պիզմարը իշխանին արտաքին աշխարհավարութեան, կամ դէժ քննադատել զայն: Բայց չէին կրնար նսեւ զոհել իրենց սիրելի սկզբունքներ՝ հաւանելով նորա ներքին աշխարհավար-

րութեան: Եւ երբ, այս չփոթութեան մէջ, Պաշտպանողականք, Կաթոլիկք և Բնկերպարականք կայսերական կառավարութեան հետ դաշնակցեցան ընդդէմ Ազատականաց, սորա յոյժ տկարացան թէ՛ ժողովուրդեան առջեւ և թէ՛ Խորհրդարանին մէջ:

Բայց մինչ Պիզմարը իշխանը գործնականապէս կը լուեցնէր Ազատականներն, Բնկերպարականք մեծ աղմուկ կը յարուցանէին երկրին մէջ: Կայսեր անձին դէմ փորձուած սպանութեան փորձերն յուսահատ Բնկերպարականաց գործերն էին: Ժողովուրդը կը հրապուրուէր Բնկերպարական վարդապետութիւններէն, և ընտրութեանց մէջ հետդհետէ աւելի ակտիւներ կը շահեցնէր անոնց: Ազատականաց փոքր ի շատէ բանաւոր վարդապետութեանց չհանդուրժող Նախարարապետը բնականապէս չէր կրնար թոյլատրել Բնկերպարականներու շատ աւելի ծայրայեղ քարոզութեանց: Ուստի, այս անգամ ալ Բնկերպարականները ծախմախել ձեռնարկեց: Դիւրին պայմաններով դաշնակցեցաւ Կաթոլիկաց և Ազգային-Ազատականաց հետ, որք ահաբեկած էին Բնկերպարական հերետիկոսութեան գտած ընդունելութեան, և խիստ օրէնքներ հաստատեց ընդդէմ Բնկերպարական ծաւալման: Այսպէս, յաջորդաբար նուաճելէ յետոյ Կաթոլիկ, Ազատական և Բնկերպարական կուսակցութիւնները, Պիզմարը իշխանը տէր կը մնայ Խորհրդարանական աստղաբեկին: Խիստ քիչ անգամ տեսնուած է որ Գերմանիոյ երկաթեայ Նախարարապետին չափ Խորհրդարանական դրութիւնն ատող աշխարհավար մը այնպիսի լիակատար յաջողութիւն գտած լինի Խորհրդարանի մը մէջ: (1)

\* \* \*

Մեր նախորդ յօդուածով աշխատեցանք ապացուցանել թէ քաղաքական կուսակցութեանց ներքեւ հացի խնդիրը կայ, թէ ոչ

(1). — Աւտսիկ հետաքրքրաշարժ օրինակ մը Գերմանիոյ Երեսփոխանաց Ժողովին ներքին պառակտմանց: Չայս կը քաղենք Գերմանացի երեւելի լրագրագետ Պ. Վերմանի մէկ նոր գրքէն:

Ապէ Սիմնի, մին յերեսփոխանաց Ազատ-Լուսնի, օր մը ուշադրութիւն կը հրաւիրէր գրաւեալ երկու դաւառաց մէջ գերմանական վարդութեան շուրջ ծախուց-վրայ: Բաղդաստելով նոր վարդութիւնը

այնչափ դադարաւորի և զգացումի խնդրով մ'է որ ժողովուրդը այս կամ այն կուսակցութեան կը յարկն, որչափ նիւթական բարեկեցութեան հիմնական խնդրով:

Գերմանիոյ կուսակցութեանց վիճակն եւս ազաւորոյց մ'է այս իրողութեան:

Վերեւ ցոյց տուինք թէ ազատական կուսակցութիւնը ֆրանքո-գերմանական պատերազմէն ի վեր յոյժ տկարացած են: Գերմանիոյ Այսրութեան ահադին զօրութիւնն այսօր ձգուած է Ներսիսի հաւատարակը՝ ուղ ազատական և պահպանողական շարժմանց պահպանողական նժարին մէջ: Այն եռանդ որով 1848 ին գերմանական ժողովուրդը փարեցան ազատական դադարաւորներու, և կուռի բռնուելով գերմանական վեհապետաց հետ՝ մի առ մի պարտաւորեցին զանոնք Սահմանադրութիւն ընդունելու, ո'չ եւս կը տեսնուի: Արեւ տարի առաջուան ընդհանուր ընտրութեանց մէջ Ազատականը շատ ամօռներ կորուսին, և ճիշդ այս միջոցիս կատարուած եռամեայ ընտրութեանց մէջ եւս տկար վիճակ մ'ունին: Յայտնի է սակայն թէ ազատական վարդապետութիւնը ամեն ժամանակ հաւատարապէս ճշմարիտ և ընդունելի են: —

Ինչ է ուրեմն պատճառը գերմանական ազգին զգացմանց այս յետադիման ի մասին:

Փրանսականին հետ, ցոյց կուտար թէ առաջ հինգ կառավարչութեանց համար ծախք կը լինէր 3,300 օսմ: ոսկի, մինչ այժմ՝ հինգ կառավարիչք կը վատնեն տարին 30,800 ոսկի, և այլն: Այս գանգաւորներ տեղի ունեցան վիճաբանութեան մը մէջ, զոր ազատական կուսակցութիւնն յարուցած էր՝ կառավարական ծախսը մէջ խնայութիւններ ընելու պէտքը ցոյց տալու համար: Բայց միայն Դանիացիք, Բոլոնացիք և Կէլֆերն ոյժ տուին Ալլանս—Լոռնցուոյ գանգաւորներն, որոց գերմանացի ազատական կուսակցութիւնը չուղեց ունին դնել, պարզապէս զի Ալլանս—Լոռնցուոյ կողմէ կուգային: Բայց շատ չանցած ուրիշ վիճաբանութիւն մը տեղի ունեցաւ գարձեալ խնայութեան վրայ, և այս անգամ Ալլանս—Լոռնցիք, Բոլոնացիք և Կէլֆերն հակառակ քուէ տուին կառավարական ծախսը մէջ խնայութիւն յանձնարարող առաջարկի մը, պարզապէս զի գերմանացի Ազատականներն էին առաջարկին հեղինակները:

Օր մը, երբ Երեսփոխանաց չորս հինգերորդը բարձրաձայն կ'ընդդիմախօսէր կառավարական ծախքի մը, Պիզմարը իշխանը Խորհրդարանէն դուրս ելաւ հանդարտապէս, ազատական կուսակցութեան Պետերէն միոյն ըսելով. «Միարանը կ'երթամ քառորդ մը, մինչեւ որ նորէն կուռի բռնուիք իրարու հետ»:

ազատական կուսակցութեան: — 1848 ին Գերմանացիք ազատ դադարաւորներու յարեցան՝ զանոնք լաւագոյն միջոց համարելով ապահովելու իրենց բարեկեցութեան խնդիրն, որուն արդեւ կը լինէր գերմանացի մեծ և փոքր վեհապետաց յետագէմ ընթացքն ի մասին երմոական, տնտեսական, վարչային և կրթական պիտոյից: Բայց ազգային միութեան և գերմանական Այսրութեան հաստատումն ա'յնպէս բարւոքեց ազգին ընդհանուր վիճակն, որ ժողովուրդը բնազդով մը համակրեցաւ այս մեծ փոփոխութեան գլխաւոր դործիչին՝ Պիզմարը իշխանին, և նոյն բնազդով հեռացաւ սորա հինաւորաց հակառակորդներէն, Ազատականներէն: Ի փոխարէն այն նիւթական շօշափելի բարեաց զորս Վիլհէլմ Այսրն և Պիզմարը իշխանը տուին իրեն, գերմանական ազգն ազատական և սահմանադրական շատ թանկագին սկզբունքներ զոհեց և դեռ կը զոհէ այդ երկու մեծ մարդոց:

Վերեւ ցոյց տուինք նաեւ թէ, ո'չ միայն Ազատականը տկարացած են, այլ միանգամայն Ընկերվարականը շատ զօրացած են երկրին մէջ: Գաղափարաց նոյն կարգին մէջ պարտինք որոնել նաեւ այս երեւոյթի պատճառներն: Ընկերվարականաց շատ սկզբունքներն հակառակ են ճշմարտապէս ազատական վարդապետութեանց: Մասնաւոր տնտեսական սկզբանց մէջ և պետութեան առ ժողովուրդն ունեցած յարաբերութեանց մէջ, Ընկերվարականը ազատական վարդապետութեանց հակառակ կը ջատագովեն: Բայց Ընկերվարականը գերազանցապէս կը յուզեն հացի խնդիրը: Ար խօսին մեծատանց հարստութիւնն այլ և այլ միջոցներով աղքատաց բաժնելու պէտքին վրայ՝ կը փաստաբանեն թէ գործաւորաց թոշակին սրուշումը գործատեարց քմահաճոյքին պէտք չէ թողուի, կը բացատրեն թէ ինչպէս գործաւորը, մինչեւ իսկ երբ ո'չ եւս կարող է աշխատիլ, իրաւունք ունի հանդատեան թուշակի մը, և այլն: Ինքնին կը հասկցուի թէ այսպիսի վարդապետութիւնը ո'րչափ հրապուրիչ ներդրութիւն մը կ'ընեն մասնաւոր գործաւորը դատուց վրայ: Ուստի, գործաւորը միահամուռ քուէ կուտան ի նըպաստ ընկերվարական ընտրութեանց, և կը լքանեն Ազատականներն, որովհետեւ ասոնց

վարդապետութեան հրապուրիչ կողմունք ո՛չ եւս չօչափելի են իրենց : Ընկերվարականը առաւելագոյն կը յաջողին մեծ քաղաքաց մէջ , որք կեդրոն են դործաւորական մեծ համախմբմանց : Այս հացի խնդրոյն շնորհիւ է նաեւ որ Ընկերվարութիւնն ապագայ ունի Եւրոպիոյ մէջ , և կ'երեւի թէ ամենէն աւելի պիտի յառաջդիմէ ա՛յն երկիրներու մէջ , ուր առաւել քան այլուր զգալի կը լինի ստորին դասուց աղքատութիւնը :

Վերջապէս , կը տեսնենք թէ համայն Գերմանիոյ մէջ կաթոլիկ կղերն ի դործ կը զնէ իւր բոլոր ազդեցութիւն ի նպաստ կաթոլիկ ընտրելեաց , ո՛չ միայն զի դաւանակից է անոնց , այլ զի մանաւանդ կղերին համար հացի խնդիր ո՛ր է այս : Ֆալքի օրէնքները նիւթապէս մեծ վնաս տուին Գերմանիոյ կաթոլիկ կղերին : Բայց եթէ Ռայխսադին անդրաւրեանական կուսակցութիւնն յաջողի իւր խորհրդարանական պայքարներու մէջ , կաթոլիկ զպրոցաց տեսչութիւնը նորէն կրնայ յանձնուիլ կաթոլիկ կղերին : — Պերլինի կառավարութիւնն իրեն հաճոյ եղած Արքեպիսկոպոսները միայն կ'ընդունի Գերմանիոյ կաթոլիկ Առաջնորդութեանց : Այս պատճառաւ թափուր կը մնան քանի մը Առաջնորդութիւններ . զի Պապը միշտ չի յաջողիր գտնել այնպիսի Արքեպիսկոպոսներ որք՝ եթէ բրուսիական Բոլոնիոյ համար են՝ չունենան բնաւ սովորաւորութեան ոգի , և եթէ սոսկ գերմանական դաւառաց համար են՝ Գերմանիոյ մասնաւոր Պետութեանց վերակենդանութեան բաղձանք չտաճեն եւ համախոհ չլինին Կէլֆերուն : — Բոլոր այս արդեւքներ , որք բարոյականէ ոչինչ ընդհատ նիւթական վնասներ կը պատճառեն կղերին , կրնան վերնալ եթէ կաթոլիկ կուսակցութիւնն առաւել զօրանայ : Հասկնալի է ուրեմն որ կաթոլիկ կղերն իւր բոլոր զօրութեամբ ոյժ տայ սոյն կուսակցութեան :

Ուստի , ո՛չ միայն Ֆրանսայի , այլ նաեւ Գերմանիոյ մէջ կը տեսնենք թէ կուսակցութիւնը կանգուն կը մնան ցորչափ հաստատուած են իրական մեծ շահուց վրայ . ցորչափ հրապուրիչ լինելու չափ թանկադին և չօչափելի լինելու չափ դործնական է այն մրցանակ , զոր կէտ նստատակի դրած են իրենց ջանից և յուսմանց : Լոկ բարոյական շահերով և վերացական նկատումներով կուսակ-

ցութիւնը չեն ասորի : Կուսակցութիւն մը որպէս զի Ազգի մը սիրտն յուզէ և հետեւապէս բազմաթիւ հետեւողներ դառնէ , պարտի՛ իւր նպատակով և դործողութեան միջոցներով չօչափելի նոյն Ազգին ամենէն կենսական շահերն , յորս հացի խնդիրը կը բռնէ առաջնակարգ տեղ մը : Թէ արդեօք այնպէս չէ՞ նաեւ Անգլիոյ և Միացեալ Նահանգաց մէջ , ուրիշ անգամ պիտի տեսնենք :

Բ. Ք.

ՎԻԻՊԱԿ. — Նախորդ յօդուածին մէջ , գլխաւաւ Լուի Ժ. Թագաւորին եղբօր անունը պէտք է կարդալ Լուի ԺԲ. , և ոչ թէ ԺԹ. :

### ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ Ի ԿՏՈՒՅ ԱՆԱՊԱՏ

Վան , 2 հոկտեմբեր , 1884

Երբ երկու շաբաթ առաջ փակուած այգիսուր կղզիին մէջ կը գրէի ձեզ նախորդ նամակս , ընկերներէս պարոն Մ. Ս. կարդալով զայն՝ « Հը , կ'ասէր ինձ , բեւեռային աշխարհի մ'ուղեւորութիւնը կը գրես » : Ընկերոջս նկատողութիւնը անարդար չէր :

Իմ նկարագիրն չէր յիրաւի բեւեռային ուղեւորութեան մը նկարագիրն , բայց խոտովանեցէք որ վանական կեանքը՝ զոր նըկարագրեցի ձեզ՝ էր այնչափ տարօրինակ , որչափ եթէ մէկը նկարագրէր բեւեռային բնակչաց կեանքը :

Ի Կտուց կղզին մենք փոյթ չունեցանք խմանալու թէ քանի՞ վարդապետներ կային անդ , քանի՞ մոնթեր , քանի՞ դործաւորներ , զի վիճակագիր չլինելու նպատակ չունինք : Բաւական էր խմանալ որ վանքին մէջ աղօթողներու , վանքի կալուածոց մէջ աշխատող դործաւորներու , վերջապէս վանքի հացն ուտող անձանց թիւն կը հասնի մօտ 70-80 ի : Վանքը չունի վանահայր : Փոխանորդի պաշտօն կը վարէ Ալիբեյի Բարսեղ վարդապետ , մի անկարող , բայց աշխատասէր ծերունի : Սա ապահովապէս ուրիշ վանքի մը մէջ չէր կարող երկու օր վանահայր լինիլ , բայց այնպէս չէ ի Կտուց , ուր միաբանութիւնը բնութաւ չէ և ուր ոչ ոք կը ձգտի հասնելու նորա պաշտօնին : Քանի մը տարի առաջ Աղթամարի միաբան Յովսէփ Կալիսկոպոս Խոտոյչեանը վարած է Կտուցի

Վանահայրութեան պաշտօնը: Ապիսկոպոս-  
վանահայր մը ունենալու տենձէն բռնուած՝  
Կտուցի միաբանութիւնը դրեթէ հինգ տարի  
առաջ վանահայր ընտրեց Նրեմիա եպիս-  
կոպոս Տէր Սարգիսեանն, այն ժամանակը՝  
երբ նա վար կ'իջնէր Վանի առաջնորդական  
աթոռէն: Վանական խաղաղ կեանքը չէր  
կարող հրապոյր ընծայել Ն. Սրբազնութեան,  
որ սովորած էր առաջնորդական բաղմայոյզ  
կեանքի մը, ուստի չընդունեց միաբանու-  
թեան հրաւերը, հրաւեր մը՝ որ ապա ուղ-  
ղուեցաւ Յովսէփ եպիսկոպոսին, որոյ ար-  
ժանաւորութիւնն էր եպիսկոպոսական աս-  
տիճան կրելը:

Կտուցի վանահայրութեան պաշտօնը թէև  
խաղաղ, բայց ծանր պաշտօն մ'է: Վանա-  
հայրը պէտք է հսկէ վանքի լրացմատարած  
հոգեբու և կալուածներու մատակարարու-  
թեան վրայ, պահպանէ վանական հաստատ-  
եալ կարգերն և սովորութիւնները, վերջա-  
պէս 80 ի մօտ բնակիչներ պարունակող  
վանքի մը վանահայրութեան պաշտօնն ո'չ  
զիւրիկ և ո'չ Յովսէփ եպիսկոպոսի նման  
անկարող և թոյլ մարդու մը գործն է: Նը-  
կու տարիէն աւելի պաշտօնավարելով Ն. Կը-  
տուց, Սրբազանն անշուշտ իւր անկարողու-  
թեան պատճառաւ թողուց վանահայրու-  
թիւնը, թէեւ ուրիշներ ալ կ'ասեն որ վան-  
քի միաբանութիւնն հրաժարեցոյց զայն,  
կէտ մը՝ զոր կղզեցիք գաղտնի կը պահեն:  
Այժմ Յովսէփ եպիսկոպոս որպէս պարզ  
միաբան կը բնակի ի Կտուց, առանց միա-  
բանութեան վրայ ամենախորք ազդեցու-  
թիւն ունենալու: Տեսնուեցանք իրեն հետ:  
Ի՞նչ տարօրինակ հարցումներ կ'ուղղէր մեզ:  
Կը հարցունէր թէ «Արդե՞ս օծուած է Կաթողի-  
կոսն, կամ Երբեք ոչ»։ Իսկզմ շատ զար-  
մացաւ երբ մեզմէ խմացաւ որ Ներսէս Սրբա-  
զան հրաժարած է: Այնպիսի բաներ կը հար-  
ցունէր, որք յայտնապէս ցոյց կուտային իւր  
գիտութեան չափը: «Ահա միակ հայ-եպիս-  
կոպոսն, որ հաւանապէս չի ցանկար կաթո-  
ղիկոսութեան» կը փախար ահանջէս ըն-  
կերներէս մին, երբ կը խօսէինք նորա հետ:  
Բայց ի՞նչ գիտեմք, ո՞վ կարող է կարգալ  
գոց սիրտ մը: Նթէ մեր մէջը միայն ար-  
ժանիքը լինէր սանդուղն, որով մարդիկ  
բարձրանային եկեղեցական պաշտօններու,  
բանինէր արդեօք վարդապետ իսկ չէին լի-

ներ: Նորա հրաժարմանէն յետոյ վանքի  
միաբանութիւնը տակաւին չէ ազատուած  
եպիսկոպոս վանահայր մը ունենալու տեն-  
ջէն: Մտադիր են նորէն հրաւիրել Նրեմիա  
եպիսկոպոսը, թերեւս մտածելով որ նա  
Վանի առաջնորդ արանէն հեռանալէն յե-  
տոյ առանձնանալով ի Վարազ, սովորած կը  
լինի վանական կեանքին:

Կղզին կ'անուանի Կոռոց, անշուշտ իւր  
հանդիպակաց Կաթողիկոսն անուն հրուան-  
դանին հետ ծովուն մէջը կտցածեւ եր-  
կընցած լինելուն պատճառաւ: Կղզին շատ  
փոքր է, հազիւ 400 մեթր երկայնութեամբ  
և ամենէն լայն տեղն նորա կէսին չափ  
լայնութեամբ, մեծ մասամբ կազմուած  
ժայռերէ: Տաճարն, որպէս նաեւ խուցերը  
չինուած են կղզւոյ հիւսիսային կողմն ցած  
և տափարակ դետնի մը վրայ և յարածամ  
ծովէն ողողուելու սղառնալեաց ներքեւ:  
Կղզեցիք կը պատմեն որ միանգամ ծովն այն-  
չափ մօտեցած է եղեր շինութեանց, որ  
միաբանութիւնը ամեն պատրաստութիւն  
տեսած է Ս. Կարապետի տաճարը քակելով,  
փոխադրել մօտակայ բարձր ժայռի մը վը-  
րայ, որ կ'անուանի Բէշք: Բայց բարե-  
բաղդաբար անհրաւէր հիւրն (ծովը) հեռա-  
նալով, վտանգն անցեր է: Մենք փորձուե-  
ցանք բաղդատել այս տեղւոյ տաճարի եւ  
առջեւի դարպասին շինութիւնն այն եկե-  
ղեցւոյն հետ, որ այս տարի մեր որպէս թէ  
լուաղոյն ճարտարապետաց ձեռամբ կը շին-  
ուի ի Վան: Որչափ ահագին տարբերու-  
թիւն: Մեր վանօրէից տաճարներն յաճախ  
կը յիշեցնեն մեզ հին, նախնի ճարտարա-  
պետութիւն մը, որ այժմ կորսուած է:  
Ճարտարապետական արհեստը հետզհետէ  
զգալի կերպով կը յետադիմէ այս կողմերը:  
Ոչ միայն կորսուած են նախնի Գոթական,  
Յոնիական և այլն ճարտարապետութիւնը,  
այլ նոյն իսկ մեզմէ մի դար առաջ եղած-  
ներն: Այժմ այս տեղ, օրինակ, չէ կարե-  
լի շինել տուն մը, նոյնչափ ճաշակաւոր,  
նոյնչափ հաստատուն, որպէս 100 տարի  
առաջ, մանաւանդ քարով շինուածներն բո-  
լորովին այլանդակ բաներ են: Բայց դուրս  
ելնէնք այս ճարտարապետական նկատու-  
թիւններէն, որք կարող են շատ հեռուն  
տանիլ մեզ:

Կը ցանկայինք տեսնել վանքի հնութիւն-

ները, սակայն զառամեալ լուսարարապետն պատասխանեց որ նորքա պահուած են, վասն զի կղզւոյ միաբանութիւնը խմացած էր որ Կարճկանցի Քիւրտեր անցեալ տարւոյ աշնան մտադիր եղած են կղզւոյ վրայ յարձակելով աւարել զայն, իրական կամ ենթադրական մտադրութիւն մը որ աւելորդ էր ասել չէ իրագործուած: Միայն տեսանք քանի մը հին գրչագիրներ, որոց ամենու կողին կամ լուսանցքին վրայ Փիրզալեմեան Ղեւոնդ վարդապետ չգիտէր թ'նչ իրաւունքով «յիշատակարաններ» գրած է, իմացնելու համար որ ինքն այս ինչ օրը վանքը եկած և այդ գրչագիրներէն զանազան կտորներ ընդօրինակած է: Եթէ ամէն ուղեւոր հարկ տեսնար յիշատակարան մը գրել այդ գրչագիրներու կողերուն կամ լուսանցքներուն վրայ, դժբա շուտով յիշատակարաններով կը ծածկուէին, որպէս անուններով ծածկուած են զանգակատան պատերն, ուր ամեն ուղեւոր կարծես պարտաւորութիւն կ'զգայ նշանակել իւր անունը: Վանքի որպէս կերակուրներն, նոյնպէս ալ ջուրը սաստիկ անտանելի է: Կղզւոյ մէջ կան ընդարձակ սառնատուններ, ուր ձմեռը կը հաւաքեն ձիւնը և ուր կ'առաջնորդուի անձրեւի ջուրը յատկապէս շինուած ճանապարհներէ: Սառնատանա ջուրը կը գործածուի ամառն, այլ դժբաղդարար սպաւած էր մեր ժամանակը և մենք ստիպուած կը խմէինք հորերու սաստիկ աղի և դառնահամ ջուրը:

Կղզւոյ հարաւային ծայրը բնական քարայրի մը մէջը շինուած կայ փոքրիկ, անշուք մատուռ մը, որոյ անունը չեմ յիշած մոռացմամբ յիշատեարիս մէջ: Դա է ճգնաւորներու վայրը: Վանքի ճգնաւոր հայրերն ճգնութեան համար այդ մատուռէն տխուր վայրը կը դիմեն եղեր, ուր յատկապէս նոցա համար կը դռնուի որջանման քարայր մը: Ոչ միայն վանքին, այլ բոլանդակ կղզւոյ մէջ բաղարձակապէս արդիւնած է իգական սեռի մուտքն, անշուշտ որպէս զի վանքի միաբանք ի տես զեղեցիկ սեռին չհրապուրուին աշխարհի ունայնութիւններով:

Վանքի մշտական եկամուտը կը կառնեն ընդարձակ վարեւահորեր, որք կը տարածին վանքի ջուրը 3-4 ժամ տարածութեան վրայ, կալուածներ Վանի, Թիֆլի-

զի, Էւրոպական և ասիական Թուրքիոյ շատ մը հայաբնակ քաղաքացի մէջ, այդ ինքեր, ջուրաղացներ, 300-400 ոչխարներէ բաղկացեալ հօտ մը, մօտ 200 տաւարներ և երկրագործական կենդանիներ և 15 զիւղերէ բաղկացեալ թեմի մը սովորական նուիրատուութիւնը: Տեսնալով վանքի եկամտից այս բաղնատեսակ աղբիւրները, կը կարծէինք որ Կառուցը մեր այն հաղուողիւտ վանքերէն մին է, որք ազատ են պարտքէ: Բայց կը սխալինք: Վանահօր հաւաստեաց համաձայն վանքը կը գտնուի 500 լիւրայ պարտուցներէ: Անշուշտ այս պարտքը չէր դոյանար եթէ աշխարհի ունայնութիւններէն հրաժարած միաբանք մերթ ընդ մերթ չը հրապուրուէին զեղին վայրի մը ունայնութիւններէն...: Պարտուց մեծ մասը կը կառնեն կաւաւարութեան անվճար տուրքերը:

Գիտեմ որ արդոյ ընթերցողն այս նկարագրութիւնը կարդացած ժամանակն հետաքրքիր է խմանալ թէ արդ եօք Կառուցի մէջ չկայ զպրոց: Նախ պէտք է յայտնեմ որ այսպէս բոլորովին վանական կեանքով չըրջապատուած դպրոցներու մասին մեր կարծիքը շատ տարբեր է կամ աւելի ճիշդ ասելով շատ փոքուած է ի Կառուց կղզին ունեցած մեր ուղեւորութենէն ի վեր: Այդ պայմաններով չըրջապատուած դպրոց մը կարող է միայն մոնթեր ընծայել ազգին, և փառք Աստուծոյ, մենք մոնթեր շատ ունինք: Կղզին իւր հիւսիւսային արեւմտեան հանդիպակաց ծովեզրին վրայ ունի ուրիշ շինութիւններ, որք կ'անուանին Ջրհան կամ Դրսի տուն: Դա է կեդրոնը վանքի երկրագործական աշխատութեանց: Այդպիսի շինութիւններ հանդիպակաց ցամաքին վրայ ունին մեր ծովու միւս կղզիներն ալ: Ահա այդ դուրսի տան մէջ սկսած են շինել կղզւոյ խուցերու բոլորովին հակադասակեր օգտակար սրահ մը, դպրոց լինելու յատկացեալ: Բայց կ'երեւի վանքի միաւանութիւնը կարեւոր չհամարիր շուտով աւարտելու ըսկընուած շինութիւնը, վասն զի մին ընկերացս, որ ուրիշ անգամ ալ այցելած էր վանքը, մեզ կ'ատէր որ ինքը տարի մ'առաջ ալ ճշդիւ նոյն կիսաւարտ վիճակին մէջ տեսած էր այդ շէնքը, որպէս տեսանք մենք: Վանքին մէջը տեսանք նաեւ քանի մը

գիշերօթիկ աշակերտներ առանց ուսուցչի : Երկու ամիս առաջ քաղաքացի վարժապետ մը կը պաշտօնավարէր անդ, բայց այժմ նա ալ հեռացած է չգիտենք ի՞նչ պատճառաւ : Ուրրասլուոյտ մութ չաւղի մը մէջ առաջնորդեցին տուն մը, ճշդիւ նման խուցերուն, զորս տեսած էինք կղզւոյ մէջը մութ և խոնաւ տեղ մը : Դա էր այժմեան վարժարանը . զի որպէս ասի նոր չէնք կիսաւարտ է : Այդ խուցը է միեւնոյն ժամանակ ուսումնարան, ճաշարան և ննջարան : Նորա կիցը կար մի ուրիշ գեանաւոր խուց ուսուցչին համար, որ անշուշտ ամեն արժանաւորութիւն ունեցած է բնակելու անկոյս և անօդ խուցի մը մէջ, ուր երբ մտայ ես, կարծեցի թէ գաղտնի որջի մը մէջ կ'իջնէի :

Հաւատացած եմ որ ամեն ազատամիտ Հայ այցեւելոյ ի Կոստեյ, որոյ նկարագիրը կ'աւարտեմ աստ, թէեւ շատ կէտեր տակաւին պակաս թողուցի, կը կազմէ այն գաղափարը, զոր կազմեցինք մենք . պէտք է յեղաշրջում մը, արմատական յեղաշրջում մը մեր վանական կենաց մէջ, առանց որոյ դա փնտրակար է թէ՛ ազգին և թէ՛ մարդկութեան : Եւ յեղաշրջում մը երբէք պէտք չէ սպասել վանքէն . . . :

ՇԱՀԵՆ

## ՈՍԿԻ ԶԿՆԻԿ

(ՊՈՒՇԿԻՆԻ)

Բարեկամիւն հոգիեր Պ. Սեդրակ Մանգրեանցի

Ա.

Կապուտակ ծովի ափին շատ մօտիկ,  
Երեսուն տարի ծեր մարդ ու կնիկ  
Մէկ հին կիսաւեր գետնափոր խրոլում  
Հանդարտ ու լռիկ սոսկ էին ապրում.  
Ծերուկը ծովից միշտ ձուկ էր բռնում,  
Պառաւն էլ տանը նստած՝ թէլ մանում :  
Մէկ օր ցանց ձրգեց ծովը ծերունին,  
Ու ջրից հանեց տիրմ բաւականին .  
Նա երկրորդ անգամ ցանցը ձրգեց ծով .  
Յանցը լըցուեցաւ ջրաբոյս խոտով .  
Նա երրորդ անգամ ցանցը ծով ձրգեց—

Ու յանկարծ ոսկի մէկ ձրկնիկ բռնեց :  
Ըսկըսաւ ոսկի ձրկնիկը կանչել,  
Մարդկային լեզուով այսպէս աղաչել .  
«Ծերս'ւկ՝ թո՛ղ ինձի որ ծովը երթամ,  
Ի՛նչ ուզէ սիրտդ՝ բոլորը կուտամ :»  
Զարմացաւ ծերը ու սարսափեցաւ,  
Երբ որ այս խօսքը ականջին հասաւ .  
Ուղիւ կրեսուն տարի ձրկնորս էր,  
Դեռ նա չէր լսած, որ ձուկը խօսէր .  
Յանցիցը հանեց, նորից ձրգեց ծով,  
Նա ոսկի ձրկին այսպէս ասելով .  
«Տէ՛ր ընդ քեզ, անմեղ իմ ոսկի ձրկնիկ,  
«Գընա՛ ծովի խորք, լողա՛ հանդարտիկ,  
«Այնտեղ մինչ վերջը դու ապրէ՛ անդորր,  
«Քու պարգեւները ինձ չեն հարկաւոր» :

Բ.

Ասաց ու դարձաւ իր պառաւ կրնկան  
Ու պատմեց նորան հրաշքն այն օրուան .  
«Այսօր ես ցանցըս ծովը ձրգեցի,  
«Ծովիցը ոսկի ձրկնիկ հանեցի .  
«Ոսկի եմ ասում, հասկացի՛ր, պառաւ,  
«Մեզ պէս ձրկնիկը խօսիլ ըսկըսաւ,  
«Խոստացաւ նա ինձ շատ դանձ, շատ բաներ,  
«Խոստացաւ ինձ տալ ի՛նչ սիրտըս ուզէր .  
«Բայց ես նորանից բան չի պահանջեցի,  
«Առանց փրկանքի ծովն արձակեցի» :  
Պառաւը ծերի վրայ բարկացաւ,  
Ու յիշոց տալով, այսպէս խօսեցաւ .  
«Ծերս'ւկ դու անմիտ, ծերս'ւկ դու յիմար,  
«Ինչո՞ւ վարձ չառիր փրկանքի համար,  
«Գոնէ լըւացքի մէկ տաշտ խնդրէիր,  
«Մերը կտորած է, — այդ խօսքիտէիր» :  
Կապուտ ծովի ափ ծերուկը դընայ,  
Ծովի երեսը կամացուկ ծըփաց,  
Ըսկըսաւ կանչել նա ոսկի ձրկին .  
Եկաւ ձրկնիկը, ասաց ծերուկին .  
«Ի՛նչ ես ուզում դու, ծերուկ պատուական» :  
Ծերունին այսպէս տըւեց պատասխան .  
«Պառաւիս սիրտը շատ բորբոքած է,  
«Իբր թէ լըւացքի տաշտը կտորած է,  
«Նորը, ասում է, բե՛ր ինձի համար,  
«Ու խեղճ ծերուկիս չի տալիս դադար» :  
«Մի՛ արտմիլ, ասաց նորան ձրկնիկը,  
«Նոր տաշտ կ'ունենայ այսօր քու կնիկը» :

Գ.

Ծերուկը ուրախ դէպի տուն դարձաւ,  
Պառաւի աւջեւ մէկ նոր տաշտ տեսաւ .

Պառաւր ռւրախ լինելու փոխան ,  
 Նոր նոր անէծքներ թափում էր վերան .  
 «Ծերո՛ւկ դու անմիտ , ծերո՛ւկ խելագար ,  
 «Մեծ բաղդ ես կարծում որ տաշտ ըստացար :  
 «Տաշտը շատ չնչին վարձ է , ո՛վ անմիտ ,  
 «Շո՛ւտ գընա ձըկին ու խնդրէ՛ խրճիթ» :  
 Դէպի կապուտ ծով ծերունին դարձաւ ,  
 Ծովի կապուտակ գոյնը մըթընցաւ ,  
 Ըսկըսաւ կանչել նա ոսկի ձըկին ,  
 Եկաւ ձըկնիկը , ասաց ծերունին .  
 «Ի՞նչ ես ուզում դու , ծերո՛ւկ պատուական» :  
 Ծերունին այսպէս տըւեց պատասխան .  
 «Իմ պառաւ կինը սաստիկ է կատղել ,  
 «Էլ նա հիւզի մէջ չէ՛ ուղում ապրել ,  
 «Ասում է՝ խրճիթ պէտք է ինձ համար ,  
 «Ու խեղճ ծերունիս չի տալիս դադար» :  
 Զըկնիկը ծերին տըւեց պատասխան .  
 «Մի՛ հոգալ-արտով , ծերո՛ւկ պատուական ,  
 «Միամիտ սրտով դէպի տուն գընա՛ ,  
 «Բու պառաւ կինը խրճիթ կ'ունենայ» :  
 Ծերունիք դէպի իւր հիւզը դարձաւ  
 Առաջուայ հիւզի հետքն էլ չի գտաւ ,  
 Իրա աչքերին նա չէր հաւատում—  
 Առջեւը կեցած էր խրճիթ սիրուն .  
 Կըտուրի վըրայ կար սպիտակ ծըխան .  
 Մաքուր սենեակի մէջ տեսաւ կնկան ,  
 Որն որ փոխանակ Տիրոջ փառք տալու ,  
 Ըսկըսաւ մարդուն յիշոցներ տալու .  
 «Ծերո՛ւկ դու անխելք , ծերո՛ւկ դու անմիտ ,  
 «Մե՛ծ բաղդ է , որ մենք ունեցանք խրճիթ .  
 «Գնա՛ դէպի ծով ու ասա՛ ձըկան ,  
 «Այս է հրամանը իմ խաթուն կընկան ,  
 «Էլ գեղջուկ մընալ չուզեմ մէկ վայրկեան ,  
 «Կուզեմ որ լինիմ ես աղնուական» :

Դ.

Ծերը դէպի ծով գընաց գըլխակոր ,  
 Տեսաւ որ ծովը սաստիկ էր սըղատր .  
 Ըսկըսաւ կանչել նա ոսկի ձըկին :  
 Եկաւ ձըկնիկը , ասաց ծերունին .  
 «Ի՞նչ ես ուզում դու , ծերո՛ւկ պատուական» :  
 Ծերունին տըւեց նորա պատասխան .  
 «Պառաւ — քաթարըս խիտ է բարկացած .  
 «Որ մինչեւ օրըս դեղջուկ է մնացած ,  
 «Բայց այդպէս մընալ չուզէ մէկ վայրկեան ,  
 «Եւ կուզէ լինել կին աղնուական» :  
 Զըկնիկը ծերին տըւեց պատասխան .  
 «Մի՛ տխրիլ-արտով , ծերո՛ւկ պատուական :  
 «Միամիտ սրտով դէպի տուն գընա՛ ,

«Կինդ այդ բաղդին էլ կարծանանայ» :  
 Ծերունիք խելոյն դէպի տուն գընաց  
 Ու իր աչքերին նա չի հաւատաց .  
 Առջեւը տեսաւ փանահեղ տունը ,  
 Պատըշգամբի վրայ կանդնած խաթունը՝  
 Սամուրէ բաճկոն ունէր նա՛հաղին ,  
 Գլխուն դիպակէ գըղակ թանգաղին ,  
 Վըղին մարգարտեայ մանեակ էր կախած ,  
 Ոսկի մատանիք մատերին հագած ,  
 Ոտերին կարմիր թանդ ոսնամաններ ,  
 Առջեւը շարած հըլու ծառաներ ,  
 Պառաւր նոցա մէջ ման էր գալիս ,  
 Սաստով ու ծեծով հրաման էր տալիս :  
 Ծերունիք գող-գող ասաց իր կընկան .  
 «Բարե՛ւ քեզ , խաթուն իմ աղնուական ,  
 «Կարծեմ որ այժմ երջանիկ ես դու» :  
 Կինն չուզաց անգամ վըրան նայելու :  
 Նորա ծառաներն շտապով վաղեցին ,  
 Աղբիւս մաքրելու ական քըշեցին :

Ե.

Կէս ամբուայ չափ հաղիւ թէ անցաւ ,  
 Մեր պառաւ կինը նորից կատղեցաւ ,  
 Նորից ծերունին առջեւը կանչեց  
 Ու ձըկնիկի մօտ երթալ հրամայեց .  
 «Շո՛ւտ գընա , ասա՛ դու ոսկի ձըկան ,  
 «Որ չուզեմ մընալ սոսկ աղնուական ,  
 «Կամ սովորական մէկ իշխանուհի ,  
 «Այլ կ'ուզեմ լինել աղատ թագուհի» :  
 Այս խօսքերը որ լսեց ծերունին ,  
 Ասաց վախեցած ու կողկողաղին .  
 «Թըւցրե՛լ ես խելքըդ , անըզամբաւթար  
 «Թէ ծիծաղեցնել ուզում ես աշխարհ ,  
 «Շէնքըդ — շորհքըդ միթէ չե՞ս տեսնում ,  
 «Որ թագաւորել էլ ես դու ուզում» :  
 Կատղեցաւ պառաւն , գոչեց սաստկաղին  
 Ու ամուր տալակ ծեփեց ծերունին .  
 «Ի՞նչպէս ես կարող տալ իրա պատասխան ,  
 «Գեղջուկ դու , իմ պէս մէկ աղնիւ կընկան ,  
 «Գէ՛հ , շո՛ւտ արա , շո՛ւտ , գնա՛ դէպի ծով ,  
 «Թէ կամաւ չերթամ կը տանեն ծեծով» :  
 Տըլուրըս դէպի ծով ծերունիք գնաց ,  
 Կապուտակ ծովի ջուրն էր սեւացած .  
 Ըսկըսաւ կանչել նա ոսկի ձըկին .  
 Եկաւ ձըկնիկը ասաց ծերունին .  
 «Ի՞նչ ես ուզում դու , ծերո՛ւկ պատուական» :  
 Ծերունիք տըւեց նորան պատասխան .  
 «Խելքը՞ թուել է խաթուն իմ կընկան ,  
 «Էլ չուզում մընալ նա աղնուական ,

«Խորհուրդ ու խըրատ էլ նա չի լըսում,  
«Ազատ թագուհի լինել է ուզում» :  
Ձըկնիկը ծերին տըւեց պատասխան .  
«Մի' տխրիկ-տրամիկ, ծերո՛ւկ պատուական .  
«Այս անգամ էլ դու հանդիստ տուն գնա',  
«Պառաւը թագ էլ գլխուն կունենայ» :

Զ.

Երբ որ ծերունին դէպի տուն դարձաւ,  
Առջեւը հըրաշք հիացք բացուեցաւ .  
Շըքեզ փռուած էր ճոխ արքունիքը,  
Դահլըճի մէջ էր նորա կընիկը  
Ճաշու սեղանի առջեւը նըստած,  
Սեղանի վըրայ խորտիկներ չարած .  
Ձորս կողմը դրանիկ ու աւագորեսր  
Ծառայում էին նորան անդադար .  
Ուտում էր ճուտով փլաւ ակորփակով  
Ու գինի խմում էր նա մեծ բաժակով .  
Դըրան մօտ կանգնած էին զինուորներ  
Ձեռքերին բըռնած սուր սուր կացիներ :  
Ծերունին երբ որ պառաւին տեսաւ,  
Իսկոյն վախիցը ոտերին ինկաւ .  
«Բարե՛ւքեզ, ասաց, դըշխոյ փառաւոր ,  
«Ահա՛ քեզ տեսայ իսպառ բազդաւոր : . . .  
Պառաւը մարդու վըրան չի նայեց,  
Միայն դահլըճից քըշել հրամայեց :  
Նախարարները վըրայ վազեցին,  
Ծերուկին ծեծով արտաքս հանեցին .  
Դռնապաններն էլ՝ ձեռքերին կացին,  
Մազ—մընաց խեղճին որ չի մորթեցին .  
Իսկ ժողովուրդը վերցուց աղաղակ,  
Ծաղր ու ծանակով արաւ խայտառակ .  
«Օ՛խ, յիմա՛ր, ասաց, միշտ խելք սորվեցիր,  
Ու միւս անգամ պատիւըդ դիտցիր» :

Է.

Էլի կէս ամիս որ նորից անցաւ,  
Պառաւը արդէն իսպառ կատղեցաւ .  
Նախարարներէն հրամայեց մէկին,  
Որ երթայ, գըտնէ, բերէ ծերուկին :  
Երբ եկաւ ծերը՝ կինն ասաց նորան .  
«Ահա՛ լսէ՛ դու իմ խիստ հրաման—  
«Գընա՛ ու գըտիր դու ոսկի ձըկան  
«Էլ սիրտը չուզէ, ասա՛, իմ կընկան  
«Երկրի վրայ լինել մէկ սոսկ թագուհի,  
«Այլ կ'ուզէ լինել ծովի տիրուհի,  
Ովկիանոս — ծովի մէջ կ'ուզէ կենալ,  
«Ոսկի ձուկին էլ ծառայ ունենալ» :

Չհամարձակեցաւ խեղճուկ ծերունին  
Հակառակ մէկ խօսք ասել պառաւին .  
Գըլուխը կախած գընաց դէպի ծով,  
Տեսաւ որ ծովը սաստիկ էր խըռով .  
Գոռում, դոչում էր անեղ փոթորիկ,  
Տատանում էին փրվըրած ալիք .  
Ըսկըսաւ կանչել նա ոսկի ձըկին .  
Եկաւ ձըկնիկը, ասաց ծերուկին .  
«Ի՞նչ էս ուզում դու, ծերո՛ւկ պատուական» :  
Ծերունին նորան տըւեց պատասխան .  
«Ա՛խ, ե՞րբ պիտ լինի վերջը իմ ցաւին ,  
«Էլ սիրտը չուզէ յիմար պառաւին  
«Երկրի վրայ լինիլ մէկ սոսկ թագուհի,  
«Այլ կ'ուզէ լինիլ ծովի տիրուհի,  
«Ովկիանոս—ծովի մէջ կ'ուզէ կենալ,  
«Բեզ էլ իւր ծառայ դեսպան ունենալ» :  
Ձըկնիկը ոչինչ չը պատասխանեց,  
Պոչը կամացուկ նա ջըրին խըփեց,  
Լուռ ու մունջ ջըրի մէջը սուզեցաւ  
Ու ծովի խորքը գընաց թաք կեցաւ :  
Երկար սպասեց նորան ծերուկը .  
Երեւան չեկաւ էլ ոսկի ձուկը .  
Իրիկնաղ էմին տուն վերադարձաւ  
Ու առջեւն այսպէս պատկեր բացուեցաւ .  
Նորա պառաւը չէմբին էր նստած  
Ու կոտրած տաշտը կար նորա դիմաց :

ԳԱՄԱՌ ԲԱԹԻՊԱ  
(Վարժարան)

Վ Է Պ

ՄԱՏԼԵՆԻ ՄԵՂՔԸ

Զ.

(Ծարանակութեան Տե՛ ԹԷ՛ 5759)

Անձրեւը անդադար կը տեղար և թըր—  
ջած զգեստներուս տակ սկսեի էի գողալ :  
Քիչ մը հեռուն ազօտ լոյս մը նշմարելով,  
դէպի այն կողմը դիմեցի և իսկոյն փոքրիկ  
սաւայատակ դաւթի մը մուտքը գտայ ինք—  
զինքս, որ մուխ առուող լապտերի լուսով  
մը կը լուսաւորուէր . երեք կողմէն նեղ լու—  
սանցիկ պատուհաններուն բարձր պատեր,

աջ կողմը ցած դուռ մը կիսաբաց, հրեցի զայն և մատուռ մը դէմն ետաւ . խորանին վրայ ճրագները վառուած էին, ծեր քահանայ մը պաշտօն կը կատարէր, բայց սակաւաթիւ ներկայ եղողները՝ մութին մէջ մընացեր էին : Խորանին աջ կողմը, բարձր վանդակ մը՝ որուն ետեւի կողմէն հասածալքերով բրդեղէն թանձր վարագոյր մը լջած էր՝ վանքի մէջ փակուած մայրապետաց ներկայութիւնը դուշակել կուտար . քիչ մը ետքը իրենց միօրինակ և ողբանուագ ձայնով երեկոյեան ժամու սաղմոսերգութիւնը սկսան կատարել : Ծոնը դնելով, եկեղեցւոյ այն անձուկ միջավայրի ամենամութ մէկ անկիւնը քաշուած՝ այդ սաղմոսաց փոխ առ փոխ միաձայն ելեւէջերով երգոց ձայնին թողուցի որորուել ինքզինքս շատոնց էր որ եկեղեցի մը մտած չէի, վերջին անգամուս Նուիզ հետս էր . այդ օրէն ի վեր ի՞նչ ահագին անդունդներ բացուեր էին . . . Երգոց և աղօթից ձայնէն տեսակ մը հանդարտութիւն սկսեր էր յիս սողուկել . ծունկ չոքած, աչքերս գոց, շրթունքս համրացած, հազիւ թէ չունջ կ'առնուի, բայց շատ չանցաւ լուծիւն պատեց, ճըրագները մարեցան և ներկայ եղողները ըսկըսան ցրուիլ : Պէտք էր մեկնիլ . —Ո՛վ Աստուած, գոչեցի ինքզինքէս դուրս ելած, Աստուած կենդանի որ մեր գանդաւորները կը լսես, որ մեր մեղաց թողութիւն կը շնորհես, Մագդաղենացւոյն և պոռնիկ կնոջ Աստուածը՝ մարդկանցմէ աւելի գթած, խղճմանքէս աւելի ողորմած, սուրբ Աստուած, ես քու պարգէններդ արատաւորեցի, միայն չարիք գործեցի . . . հպարտութեամբ ապրեցայ և հպարտութիւնը եղաւ պատճառ կորստեանս . առ քեզ գոչեմ, Տէր, փրկէ՛քու ձեռքիդ արարածը :

Ուսիս վրայ թեթեւ հարուած մը սթափեցուց զիս . կէս աշխարհական կէս կրօնաւորական զգեստ հագած կին մ'էր . —Դուռը պիտի փակեն, ըսաւ :

— Ի՞նչ է այդ եկեղեցւոյն անունը :

— Աստուածային գթութիւն :

— Անշուշտ վանատուն մը :

— Ո՛չ, տիկին, ապաշխարող աղջկանց ապաստանի տուն է այս : Կարծես թէ սըրտիս ուղղակի հարուած մը տուած ըլլար, այնպէս՝ մոլորեալ իմն, ետ ետ քաշուեցայ

— Ա՛հ, միմաղի, հո՞ն է որ կը փակեն այդ դժբաղդ արարածները . . .

— Այո՛, տիկին, սակայն կան եւս որք երբեմն իրենք իրենց կուգան հոս :

Եւ առանց աւելի երկար ինձի ուշադրութիւն ընելու, սկսաւ ամփոռները կարգի դնել : Դեղեակոտ և դողդոջուն քայլերով ելայ անկից և փոքրիկ գաւիթը հասնելով՝ պարտաւորեցայ պատին կսթնիլ . բացուած դրան դրսի կողմը կը անսնէի ամայի քարայր և ծովուն պզտիկ ջուրը, ներք սաղմոսերգութեանց տկար արձագանգը կարծես դեռ ականջիս կը հնչէր : — Յիրաւի արդեօք կը գանուին կանայք որք իրենք իրենց կամովին հոս գլխին . բայց ե՞րբ, ինչպիսի խղճի խայթերէ դրդեալ և սրտիւ աղէկէզ : Կա՞յ որոշ վայրկեան մը կենաց մէջ, յորում հոգին կ'ըսէ ինքնիրեն . Ահաւասիկ ժամը . կա՞յ արդեօք այդ խեղճ արարածներէն մէկը որ սիրուած ըլլայ և սիրաւ սիրով զեղուն հոս մտած ըլլայ կամովին : Այս մտածութեան մէջ այնքան ընկզմած էի որ քովէս մէկուն անցնելու ոտնաձայնը լսելուս դող ելայ : — Հիւանդ ես, ինչ բանի կը սպասես, հարցուց վանուց պատահանապան կինը որ դռները փակելու ժամանակ մթութեան մէջ նշմարեր էր զիս :

Շարժմանը մը ըրի դուրս ելնելու համար, բայց չգիտեմ ի՞նչ խորհրդաւոր զրուութեան մը հնազանդելով, հարցուցի .

— Այս երեկոյ կարելի՞ է գլխաւոր մայրապետին հետ խօսիլ, քանի որ այս միջոցին խորտակելու աստիճան սիրտս կը բախէր պատասխանին սպասելով . կ'ըսէի ինքնիրեն . Ահաւասիկ ձախառագրիս վճիռը . եթէ Ո՛չ ըսէ՛ կ'երթամ, Բոպէր ինձի կը սպասէ, իսկ եթէ ընդհակառակն . . . ըսել է թէ այդ է եղեր ինձի նախասահմանեալ :

Ինձի այնպէս մը երեւցաւ որ դարեր կ'անցնէին մինչեւ որ բերանը բացաւ և խօսք մը արտաբերեց . պարտաւորեցայ իրեն կըրկնել տալ տուած պատասխանը, վասն զի չէի լսած . — Այս ժամուս անկարելի է, ըսեր էր : Մեծ չունջ մը առի, և սակայն դուրս չեկայ :

— Հոգի մը փրկելու խնդիր կայ հոս, ըսի, Աստուած քեզի թողութիւն շնորհէ, քոյր իմ, եթէ կարենալով զիս ներս մտցնել մերժեցիր :

Հեռացայ . Կանչեց զիս : — Մտի՛ր , ըսաւ , երթամ հարցնեմ թէ խնդրածդ կարելի՞ է :

Ամա մի՛շտ աչքերս մթագնեց : Ինձ այնպէս կ'երեւար թէ երկիրը շուրջս կը դառնար , փախչելու փորձութիւն մը զգացի . բայց նա արդէն դուռ մը բացեր էր , առջեւս կը քալէր , ես ալ իւր ետեւէն կ'ընթանայի : Առաջնորդեց ինձ խօսարան մը , հասարակ ձերմակ վայտէ սեղանատախտակի մը վրայ փոքրիկ լսարան մը դրաւ , յետոյ ինք դուռս ելաւ : Յարգէ՛ ավթոռի մը վրայ ինկայ և ականջ դրի : Ներսէն զանգակի ձայն մը լսուեցաւ , մէկ երկու անգամ դարձուեցաւ , յետոյ զգուշաւոր ոտնաձայնք և միմեանք , յետոյ լուսթիւն և քիչ մը վերջը ուրիշ զանգակի ձայն մը աւելի հեռուէն , որ միեւնոյն նշանը կը կրկնէր : Չգիտեմ որչափ ժամանակ հոն մնացի ահագողի մէջ և միմիակ սրտիս բարախումը մտիկ ընելով : Վերջապէս ինձ մօտիկ դուռի մը ձայն դուրս դարձնել տուաւ դէպ ի կրկնակի սեւ վանդակաւ մը որ երկուքի կը բաժնէր իմ գտնուած փոքրիկ սրահակը : Այդ վանդակին ետեւէն տախտակամածին վրայ քրտուող զգեստի ձայն մը առի : Բանալի մը ձուլեց կղզակի մը մէջ և ծանր փեղկերը որ ներսանց վանդակամածին մէջ ազուցեալ էին՝ խախտելով խորշ խորշ իրարու վրայ ամփոփուեցան յամրաշարժ : Ձերմակ ասուի պարեգօտ հագած սեւաւարդեալ կին մը ինձ երեւցաւ նեղ շերտերուն ետեւէն , և անխօս՝ դէմս կանգնեցաւ : Այն ատեն , այդ անծանօթ զօրութեան իշխանութեան ներքեւ , որուն ակամայ կը հնազանդէի , իմ տխուր պատմութիւնս պատմեցի , այդ մեռնելու փորձութիւնը որ զիս կը գրաւէր , և բաղդը որ զիս հոն առաջնորդեր էր , և որն որ այս պահուն զիս կը գրգռէր իրեն խորհուրդ հարցնելու : Առանց ընդհատելու մտիկ ըրաւ ինձ :

— Ատուած է որ զքեզ կը փնտռէ , աղջիկս , ըսաւ , երբ խօսքս վերջացուցի : Ականջ դիր իրեն . իւր ոտից առջեւ հրաժարէ՛ այդ ազատութենէն որն որ ի չարն դորձածեր ես , անձնատուր եղիր իրեն բայց ազատութեամբ և ոչ թէ յանկարծակիի գալով : Գնա՛ և խորհէ՛ . երբ հաստատապէս որոշես , դարձի՛ր , մեր բնակարանը բաց է քեզի համար :

— Նթէ երթամ , գիտեմ որ չսիրտի դառնամ , գոչեցի , վանդակաւ մածին առջեւ ծընդան վրայ գալով : Մայր իմ , դու որոշէ՛ ինձ համար . ես ակար եմ , վասն զի կը սիրեմ . կ'զգամ որ սիրտս կը դեղեւի , պահեցէ՛ք զիս , փակեցէ՛ք ձեր վանդակները այս անձին վրայ որ աշխարհէս սիրտի անհետանայ . . . ո՛ր գիտէ եթէ երբեք այսպիսի պատեհ առիթ մը ձեռք սիրտի կարենամ ձգել :

Ես կ'աղաչէի իրեն , նա՛ առանց պատասխանելու կը խորհէր , և վատութեամբ կը յուսացի դուռ որ զիս չսիրտի պահէր . վերջապէս զիջաւ :

— Միտքդ դի՛ր որ ըսաւ՝ ուզած օրդ աղաւ սիրտի ըլլաս ելնելու և գիտելով իմ տեղութիւնս . — Խեղճ աղջիկ , ըսաւ անուշութեամբ , իրաւունք ունիս մեզի դալու , ոչ որ զքեզ կը խնդրէ , ամենուն համար քար քայթակղութեան մ'ես : Այն ժամանակ ինձ հարցուց թէ մնաս բարով ըսելու մէկը չունէ՞ր , չնորհակալ եղայ իրեն այս մտածութեանը համար , և գողգոջուն ձեռք յետագայ տողերս գծեցի .

Այս է՛ Կարէն է

« Քեզի կը կտակեմ Լուիզը միեթարել , Չափազանց սիրեցի զքեզ , Բոպէր . այս սէրը ամենու թըռուտութեան պատճառ եղաւ : Շատ բան քաշեցիր իմ պատճառաւ , խեղճ բարեկամ , և շատ անգամ զքեզ տխուր և գուշատ տեսնելով ինքզինքս անիծեցի : Ներէ՛ք զիս հասուցած և դու հասցնելիք չարեացս համար . իմ կարողութենէս վեր էր այսպէս ապրիլ , Լուիզի արցունքները զիս կը խղզէին : Դէպի վսեմը նկրտեցայ և չարաչար ինկայ , անօգուտ և չարեացաւթեալ էակ մը եղայ : Քեզի կը մնայ , Բոպէր , իմ գործած չարիքս դարմանել , քու ձեռքդ է այսուհետեւ այնպէս մը ընել որ հոգիս՝ այդ հոգին որ զքեզ այնչափ պաշտեց , օր մը հանգչի խաղաղութեամբ : »

Շատ արցունքներ թափեցան այս տողերուն վրայ , և զայն վերջացնելու արտորալով՝ շատ բաներ որ կ'ուզէի զրուցել լուսթեան մէջ խեղդեցի : Աւագուհին կ'սպասէր . ներկայացուցի իրեն թուղթը , բայց նա մերժեց նոյն իսկ ընթերցուլը զայդ . — Տակաւին ազատ ես , ըսաւ : Հասցէն դրեցի , և խնդրեցի իրմէ՛ նոյն երեկոյին զրկել զայն Բոպէրին , բայց այնպէս որ թղթատարը չկարենար տեսնել . յետոյ խօսարանէն մեկնեցայ , և սպասուհանապաւն կ'ընր ապաստանարանին ներքնակողը անցուց զիս ուր դը-

տայ աւագուհին : Նա ալ ձեռքէս բռնելով նեղ անցքերէ և երկայն սանդուղներէ առաջնորդեց : — Խիստ են տեղւոյս կանոնները ըստ և ծանր պիտի դան ձեզի հոգեւոր կրթութիւնները : Կուղէի թեթեւցընել, բայց իշխանութենէս վերէ, արիա-նալու համար, զաւակս, պիտի մտածես որ՝ կեանքս կարճատեւ է և շատ բան ունիս քաւելու :

Պատասխան չտուի : Ինչ հոգս էր . միտքս ուրիշ տեղ էր . թղթատարին քայլերուն կը հետեւէր և կամ լաւ եւս կը կանխէր իսկ քան զայն : Ահ ինչպէս կը դողայի Րոպէրին համար . հագիւ թէ անդրադարձայ որ ննջարան մը կը մտնէինք և մերկ ու ցուրտ խշտուոյ մը առջեւ կանգ կ'առնուինք . չգիտեմ ինչպէս եղաւ որ ինքզինքս հանուած ու պառկած գտայ : Աւագուհին քաշուեր էր, առկայծեալ պատրոյկ մը կը ցոլար և այդ ընդարձակ սրահին մէջ քուռ եղող կանանց շնչառութիւնը իմ շուրջս կը հասնէր իբրեւ խուլ միմունջ մը :

Որպիտի գիշեր . քանի՜ անգամ ելայ կայ-նեցայ որոշ միտքս դնելով զդէստներս առնուլ և Րոպէրին դիմել . յետոյ միտքս բերելով որ ամենքը կը քնանային և իմ ելնելս անկարելի էր, վճատած վերատին անկողնիս վրայ ինկայ :

ԲՕԼ ԱԼՊԱՆ

(Ծառանկէէ)

## ՔԱՂՈՒԱԾ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ

15-19 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԱՐՏԱՔԻՆ

Անցեալ շաբաթ իբր վերջին լուր համառօտիւ յիշատակեցինք Պեղծիոյ կղերամիտ նախարարութեան հրաժարին :

Երբ վերջին ընտրութեանց ժամանակ կղերայինք դործոց զուլս անցան ընդ նախարարապետութեամբ Պ. Մալուի, առաջին դործ ըրին հիմն ի վեր տապալել իրենց նա-

խորդաց՝ աղատականաց, կրթական քաղաքականութիւնը : Աղատականք, թէեւ Խորհրդարանին մէջ տկարացած, երկրին մէջ տակաւին զօրաւոր էին և ամեն տեսակ երեւակայելի միջոցներով ընդդիմացան իրենց հակառակորդաց բռնած նոր քաղաքականութեան : Կղերայինք, ուղեւոր անմիջապէս մեծ օգուտ մը քաղել իրենց յաղթանակէ, այնպիսի ծայրայեղ ընթացք մը բռնած էին որ զայրոյթ պատճառեց աղատական կուսակցութեան : Աղատականք սկսան բոլոր զօրութեամբ աշխատիլ յաղթող ելնելու, դռնէ քաղաքային ընտրութեանց մէջ : Որպէս զի Պ. Մալուի նախարարութեան դպրոցային նոր օրէնքն յաջողապէս ի դործ դրուէր, հարկ էր որ ոչ միայն Խորհրդարանն, այլ և քաղաքացի ու գիւղօրէից խորհուրդները կազմուած լինէին Նախարարութեան կուսակիցներէն : Բայց աղատականք յաղթող հանդիսացան ստուար մեծամասնութեամբ ամեն կարեւոր քաղաքացի մէջ, ի բաց առեալ զՄեքէն, ուր Արքեպիսկոպոսին ազդեցութեան շնորհիւ Կղերականք փոքր մեծամասնութիւն մը չահեցան : Հետեւապէս Պ. Մալուի նախարարութիւնն հրաժարական տալ պարտաւորեցաւ :

Նոր (կաթոլիկ) նախարարութիւնը կազմուեցաւ ընդ նախադահուութեամբ Պ. Պէրնաէրտի : Հէնցի նախկին կառավարիչ Գաբանան Երմէյ իշխանն արտաքին դործոց նախարար անուանեցաւ :

— Քուրպէ ծովակալը ծանոց հոկ. 21ին թէ Ֆորմուզ կղզւոյն բոլոր նաւահանգիստը պաշարման ենթարկեալ են, որով կղզւոյն չինացի պահապան զօրքերն արտաքին աշխարհի հետ յարաբերութենէ ընդհատուած են : Չինացիք վճատած չեն իրենց վերջին պարտութիւններէ որ թէ՛ ի Թոնքին և թէ՛ ի Ֆորմուզ : Առաջ մէկ երկու ժամ կռուելէ յետոյ ի փախուստ կը դառնային : Այժմ կը դիտուի որ առաւել երկար ժամանակ կը դիմադրեն, և աւելի կորուստ կը պատճառեն Ֆրանսացւոց որք կը զարմանան առաջուրէն շատ աւելի սաստիկ ընդդիմութիւն մը դնելով «Երկնային Կայսրութեան դաւաճակց» կողմէ : Պ. Ժիւլ Ֆէրրի հրաման դրեալ է որ խորհրդարանական նստաշրջանի վերսկսման առթիւ, ծովակալը և հրամանատարը քանի մը վճռական յաղթութիւն-

ներ ձեռք բերեն, որք ամեն փաստաբանութենէ առաւել համոզիչ կերպիւ կրնան փակել հակառակորդաց բերանները: Բայց չինացիք կը դարմանեն իրենց կրած կորուստները, նաւեր կ'ընկղմեն նաւահանգստաց մէջ՝ զանոնք անմերձեւալի դործելու համար ֆրանսական նաւատորմին, եւ ջարդուած հաղարաւորներուն տեղ զիւրաւ կը գտնեն նոր դօրք:

— Կը հաստատուի թէ եզրկտական կառավարութիւնն արդարեւ ետ առած է զըլ-խավճարի դադարման տնօրինութիւնն: Յատկացեալ հատոյթը նորէն կը վճարուին պարտուց Սնտուկին: Բայց օտար պատուիրակը ետ չպիտի կենան իրենց դատէն, զոր ձեւապէս յառաջ պիտի մղեն: — Հոկտ. 20ին Միջազգային Դատարանն որ Սլեքսանդրիա՝ առաջին անգամ մտիկ ըրաւ օտար պատուիրակաց բողոքն՝ ընդդէմ՝ նախարարութեան Նուպար փաշայի, բայց Դատարանը չընդունեց օտար պատուիրակաց փաստաբան Պ. Ֆիկարիի փաստը, թէ՛ դատին ստիպողականութիւնն արուի, եւ ամապարելու պէտք չտեսնելով, նոյեմբ. 17ի օրը սահմանեց դատին ունկնդրութեան: — Ֆրանսայի Երեսփոխանական Ժողովոյ հոկտ. 20ի նախն մէջ, եզրկտական խնդրոյ վրայ Պ. Կապաուտի հարցապնդումը մէկ ամիս յետաձգեցաւ ըստ խնդրանաց Պ. Ժ. Ֆէրրիի, որ յայտնեց թէ անգլիական կառավարութիւնն իրեն խօսք տուած է այս խնդրոյ մասին պաշտօնական ղեկուցումներ ընել նոյեմբերի սկիզբը:

— Իսլանտայի ծալտեալ ոստիկանք կտրեւոր ձերբակալութիւն մ'ըրին ի Լիվրբուլ: Ամսոյս 15ին գիշերը, Լաբա Բլայլ չոգենաւէն կ'ենէին Ֆիլանտէլֆիայէ եկող ուղեւորներ: Ոստիկանք սոցա մէջէն ձերբակալեցին Հոնդարացի մը, որոյ վրայ կասկած ունէին եւ որոյ պայտսակաց մէջ գտան 50 ծրար ամերիկեան ուժանակ: Կը կարծուի թէ այս ուժանակով ի դործ պիտի դրուէին Անգլիոյ մէջ այն նոր դաւադրութիւնը զորս սպառնացած էր յառաջագոյն Օ' Տոնովան Ռոսս, հրաշունչ պարագլուխն Ֆէնիանաց յԱմերիկա: Անգլիացի ծալտեալ ոստիկանք կամ քիչէ այս միջոցիս խիստ հսկողութիւն ի դործ կը դնեն ո՛չ միայն Անգլիոյ այլ եւ այլ մասանց, այլ նաեւ Պելճիոյ նաւահանգստաց

մէջ, ուստից կը կարծուի թէ Անգլիա պիտի անցնին՝ Ամերիկայէն եկող Յեղափոխականք:

— Լահոռէ կը գրուի թէ ինքնակոչ ռուս «վաճառականներ» տարւոյս մէջ յաճախակի երեւցած են Աֆղանստանայ մայրաքաղաքըին մէջ, եւ Էմիրին պաշտօնակալը անշափ ուշադրութիւն կ'ընծայեն այս նորեկներու, որ չատ կը կասկածուի թէ կաշառուած են անոնցմէ: Դիտելի է՝ սակայն թէ այս ուղեւոր վաճառականք կը մոռնան որ եւ է աւելտրով վրազիլ, ի բաց առեալ ամեն տեսակ տեղեկութիւններ քաղելու դործը, զոր յառաջ կը մղեն ամեն ուղղութեամբ, աշխատելով մանաւանդ խմանալ թէ աֆղան ժողովուրդը տրամադիր է մասնակցիլ զօրաւոր արշաւանքի մը դէպի Վերին Հընդկաստան: — Ռուսք եւ Անգլիացիք այս միջոցիս չատ բարեկամ կ'երեւին: Լորտ Տըֆրին Հնդկաստան կ'երթայ՝ բարեկամական համաձայնութիւն մը հաստատելու Ռուսիոյ հետ Կեդրոնական Ասիոյ կողմէ: Բայց կը թուի թէ ռուսական լրտեսութիւնը բոլորովին պարապ չկենար, եւ ձեւքի տակէ կը դործէ ի նախատեսութիւն այն պարագայի յորում Ռուսիա պարտաւորի թշնամական դիրք մը բռնել անգլիոյ դէմ: Յայտնի է թէ յայնժամ Ռուսաց կողմէ Անգլիացոց դէմ մեծադոյն հարուածը պիտի լինի՝ Աֆղանաց հետ դաշնակցութեամբ արշաւանք մ'ընել դէպի Հնդկաստան:

— Խտիվին կառավարութեան առարկութեանց վրայ, եզրկտական բանակը բողոքովին ջնջելու մասին Լորտ Նորթպրուքի ծրագիրը թողուած է, եւ որոշուած է միայն որ այդ բանակ 5,000 զօրքի վերածուի: Հետեւապէս, բանակին ծախքը տարին 150,000 ոսկւոյ միայն պիտի հասնի: Ոստիկանութեան ծախքն ալ տարին 200,000 ոսկւոյ պիտի լիջնէ, թէեւ 1,200 հոգի պիտի աւելնան ոստիկանութեան վրայ: — Իտալական պատուիրակն ո՛չ միայն ետ չէ կեցած Նուպար փաշայի դէմ բացուած դատէն, այլ Իտալիայէն՝ վերադառնալու առթիւ յայտարարած է նաեւ թէ կը մասնակցի ֆրանսացի եւ աւստրիացի պատուիրակաց յարուցած դատին: — Գլխավճարի դադարման միջոցին եզրկտական գանձուն վճարուած գումարն է 500,000 անդլ. ոսկի: —

Վատի-Հայֆայէ կը հեռագրուի թէ Լորտ Ուոլլիի հրամանատարութեամբ անգլ. ազատիչ զօրախումբը Սուտան երթալու համար թէ՛ ցամաքի և թէ՛ Նեղոսի ճամբով յառաջ պիտի խաղայ նոյեմբերի սուաջին չաթիուն մէջ :

— Լոնտոնէն հոկտ. 22 թուով հեռագիր մը կը ծանուցանէ թէ ամբողջային ցոյց մը տեղի ունեցեր է ի Տէմֆէրիս : Լորտ Սալիզբըրի Տէմֆէրիս գնացած էր Պահպանողականաց մէկ գումարման նախագահելու : Ստուարտթիւ ամբոխ մը, յորում տըղայք և երիտասարդք մեծամասնութիւն կը կազմէին, Պահպանողականաց Պետին ետեւէ գնաց մինչեւ Ֆէքնէին տեղը, սուլելով և անարգական աղաղակներով : Մէքնէին սկիզբէն մինչեւ վերջն ամբոխը տհաճութեան ցոյցեր կ'ընէր բարձրաձայն . և քիչ մնաց որ Պրիմինէյմի մէջ եղածին նման՝ արշաւէր Ֆէքնէի շրջափակէն ներս, և կուռի բռնուէր պահպանողական ունկնդրաց հետ : Երբ դուրս ելաւ լորտ Սալիզբըրի, նոյն տեսարանը աւելի սաստկացան : Այս անգամ քարեր ալ արձակուեցան աշնուական Լորտին կողքին վրայ : Ոստիկանութիւնն անկարող էր վերջ մը տալու այս անկարգութեան, որ դադրեցաւ երբ զԼորտ Սալիզբըրի տանող կառախումբը ճանրայ ելաւ դէպի Լոնտոն : Բարեբախտապէս, մարդ չը վիրաւորեցաւ այս անգամ : — Պ. Վատտզոն նամակաւ մը կը պարտաւէ ամբոխին այս ցոյցերն, և կը պատուիրէ որ երկու կողմերն հանդարտօրէն լսեն իրարու փաստերը, զի այս կերպիւ կ'ըսէ, ժողովրդային ընդդէմութեան խնդիրն աւելի զօրեղապէս պիտի պաշտպանուի :

— Սօֆիայէն հոկտ. 27 թուով կը հեռագրեն թէ՛ Սլէքսանդր իշխանն անձամբ բացաւ Նրեսիփոսանական ժողովոյ նոր նշտաշրջանն :

Իւր ճառին մէջ, Իշխանն հաստատեց երկրին վայելած անդորրութիւնն և Պուլկարիոյ համար տէրութեանց ունեցած հաստատուն բարեացակամութիւնը : Մանոյց թէ ներկայ նստաշրջանի մէջ զանազան օրինական ծրագրեր պիտի ներկայացունեն ելեւմտից վերաբերմամբ : Նրեսիփոսանական ժողովոյ ուղադրութիւնն հրաւիրեց Պուլկարիոյ երկաթուղեաց եւրոպական երկաթուղեաց

հետ միացման խնդրոյն վրայ :

Իշխանն իւր ճառը վերջացուց յոյս յայտնելով որ ի մօտոյ կը հարթուի Սերպիոյ հետ վէճը :

— Լորտ Նորթպրուք Գահիրէէն Մարսիլիա դնաց : Կառավարութեան որոշման համեմատ՝ եգիպտական բանակին զօրաց 5,000 հոգւոյ իջնելուն պէս, անոր մէջ ծառայող բոլոր անգլիացի սպայներն, ի բաց առեալ միայն 10 հոգի՝ որք հրաժարական պիտի տան, Սուտան դնացող անգլիական բանակին պիտի հետեւին :

— Ոչնչականաց դաւադրութիւն մ'երեւան ելաւ ի Բեդրսուուրի, որոյ նպատակն էր Չարն սպաննել :

## Ն Ե Ր Ք Ի Ն

Կայսերական անձնական գանձուն նախարար Վսեմ Գազազեան Յակոբ փաշայի Վէդիրութեան հրովարտակին ընթերցման արարողութիւնը կատարուեցաւ Նորին Վսեմութեան Բերայի ապարանքն, անցեալ չաթիթ օր, արտաքոյ կարգի շքեղութեամբ :

Որչեալ ժամանակին, զօրաց փաշտ մը ապարանաց առջեւ կարգաւ կեցած էր և զինուորական նուազածուաց խումբ մը գրեթէ անընդհատ եւրոպական և տաճկական ընտիր նուազներ կ'ածէր . հանդիսականներու մեծ բազմութիւն մը խռնած էր տանը մօտակայ փողոցներուն մէջ :

Նորին Վսեմութեան ապարանաց մէջ խմբուած էին կայսերական անձնական գանձուն պաշտօնատան բոլոր պաշտօնեայք, պալատական բարձրաստիճան անձինք, իւլէմայից խումբ մը, նոյնպէս Օսմանեան Կայսերական Պանքայի տնօրէնն, և աղբային ու օտարազգի պատուաւոր և հանրածանօթ անձինք :

Օգոստ. Սուլթանին սենեկապետներէն Վսեմ. Մահմուտ պէյ հասաւ պալատական կառքով մը :

Վսեմ. Յակոբ փաշա, որ իւր աստիճանին յատուկ համազգեստն և կուրծքին վրայ Օսմանիյէի եւ Մէճրիյէի առաջին կարգի պատուանշանքն և Իմթիայէի ոսկի և արծաթ շքադրամները կը կրէր, ապարանքին դռուն

իջնելով դիմաւորեց զՄահմուտ սէյ, որ կառքէն իջաւ և իւր ձեռքը դանուած կայսերական հրովարտակն երկիցս համբուրեց եւ յանձնեց Վսեմ. Յակոբ փաշայի, քանի մը խօսք ուղղելով, որ Նորին Կայսերական Վեհափառութեան պատգամներն էին :

Յակոբ փաշա հրովարտակն ամենայն ակնածանօք ընդունելէ յետոյ, ըստ օրինակի երկիցս համբուրելով՝ ճակատը դրաւ, եւ առաջնորդութեամբ հանդէսին արարողութեան, ապարանաց դահլիճն ելաւ ընդ սենեկապետին, ուր ի ներկայութեան հանդիսականաց անմիջապէս հրովարտակն կարգաց պալատան արարողութեան, յորմէ յետոյ պալատան Խնամներէն մին աղօթք մը կարդաց վասն երկարութեան Օգոստոսիա Սուլթանին կենաց, նաեւ վասն իւր լուսամիտ նախարարաց, մաղթելով մասնաւորապէս որ արդիւնաւորին նախարար Յակոբ փաշայի գործերն և ձեռնարկութիւններն : Հանդիսականք այս բոլոր բարեմաղթութեանց ձայնակից եղան իրենց սրտաբուխ «ֆէններով» : Այս մաղթանաց յաջորդեց Այա Սօֆիայի մելիքին մեծաւոր Խնամին արարելէն լեզուաւ մէկ աղօթքն, որ նոյնպէս վերջացաւ հանդիսականներու «ֆէններով» : Յետոյ համայն հանդիսականք կարդաւ ներկայանալով Նորին Վսեմութեան, իրենց շնորհաւորութիւններն և մաղթանքները մատուցին :

Յետոյ հանդիսականք նոյն կարգաւ գընացին Վսեմ. Յակոբ փաշայի աղնուռհի մօրքով՝ իրենց շնորհաւորութիւնները մատուցանելու :

Վսեմ. փաշան հրովարտակն ընդունած պահուն, պաշտօնակալ մ'իւր ձեռքը բռնած էր ամիսէ մը, որոյ վրայ բուրանոցի մը մէջ կնդրուէին ու զմուռն անուշ հոտ մը կը բուրէին :

Հրովարտակն, որոյ ընթերցումը տեւեց տասն վայրկեան, կը յիշատակէր Նորին Վսեմութեան հաւատարմի՝ ծառայութիւններն, իւր պաշտօնական շրջանակին մէջ ի դործ դրած բարեխորհումներն և այն դուռնակութիւն զոր Վեհ. Սուլթանն զգացած էր Վսեմ. Յակոբ փաշայի նկատմամբ :

Հրովարտակը դուռած էր կարմիր սընդուռէ քսակի մը մէջ :

Այս շքեղ արարողութեան աւարտմանէն

յետոյ, Վսեմ. Յակոբ փաշա կայսերական պալատը գնաց, իւր երախտագիտական զգացումները ներկայացնելու յոտս դահլից Օգոստ. Խնքնակալին :

— Հիճրէթի տարեգլխոյն առթիւ Օգոստ. Սուլթանը բարեհաճեցաւ իւր ներկայութեան ընդունիլ եղիպտացի Հալիմ փաշան : Նորին Վեհափառութիւնը սիրալիր ընդունելութիւն ըրաւ իշխանին, և ի նշան մեծարանաց, ծանրադին ժամացոյց մը նուիրեց որոյ վրայ փորագրուած էր Սուլթան Համիտ Կայսեր Օգոստոսիաւ Հօր, Ապաիւլ Մէճիտի կիտուածանկար պատկերն :

— Նախարարաց խորհուրդն իւր չորեքշաբթի աւուր նստին մէջ որոշած է մերժել Պ. Հիրշի հակառաջարկներն եւ հրաւիրել զինքն որ ընդունի Բ. Դրան նախկին առաջարկները զորս Պ. Հիրշ կը մերժէ : Բ. Դուռը պաշտօնապէս հաղորդած է սոյն որոշումն Աւստրիական դեսպանին և ծանուցած է Ն. Վսեմութեան որ, եթէ Պ. Հիրշ չհամակերպի Բ. Դրան կողմէ նախապէս ներկայացեալ առաջարկներուն, Օսմանեան կառավարութիւնը միացման գծերու շինութեան պիտի ձեռնարկէ ուրիշ մը միջոցաւ կամ իւր մենաշնորհ յանձնելով գործն :

— Պաշտօնական ազդով մը կը ծանուցուի թէ՝ Օսմանեան վաճառարար՝ չոգենաւուց նաւապետներ պատրաստելու նպատակաւ, նաւային վարժարան մը պիտի հաստատուի, ուր պիտի ընդունուին Օսմանեան հպատակ տղայք առանց կրօնի և ազգի խտրութեան : Տակաւին որոշուած չէ թէ ո՞ր կողմ պիտի հաստատուի սոյն վարժարան, բայց Հէյ-սէյի նաւային վարժարանին մէկ մասը պիտի կազմէ, և այդ կողմը մէկ կողմը կամ այլ պատշաճագոյն վայր մը պիտի հաստատուի հաւանականաբար :

— Ալեքսանտրիոյ, Անտիոքայ եւ Երուսաղիմայ Յոյն Պատրիարքունքը, Սինա լեռան և Այնօրոյի վանուց միաբանութեանց հետ համաձայնութեամբ բողոքագիր պիտի ուղղեն առ Բ. Դուռն ընդդէմ Բուսանական կառավարութեան : Կը յիշուի թէ Պաքէշի երեսփոխանական ժողովը վերջեւ օրէնք մը քուէարկեց որով Բուսանական կառավարութեան ստացուածքը կը համարի Տօպրուճայի մէջ գտնուած քանի մը կալուածներ, որք յիշեալ Պատրիարքութեանց կը պատկանին :

— Էվգաֆի պաշտօնատան և կոմս Գալստոյի մէջ բաւական ժամանակէ հետէ երեւան ելած Մահլիւլի դատն՝ որ վերջերս Պետական խորհրդոյ յանձնուած էր, որուն է մատուցանել Նախարարաց ժողովոյ վերջնական քննութեան և տնօրէնութեան : Ըստ Թէրճէմանը — Հաղիգաթի՝ 150 հազար լիրայի վրայ է այս դատն, և մինչեւ ցարդ Էվգաֆի պաշտօնատան նպատակաւ վիճակի մէջ կը գտնուի, թէպէտ կոմս Գալստոյի կողմանէ կը մատուցուին վաւերական թուղթեր, զորս կերպիւ իւր ձեռք անցուցեր է կոմս Գալստո, կըսէ Թէրճէման :

— Օգոստ . Սուլթանը Վէզիրութեան աստիճան չնորհեց հանրային շինուածոց նախարար Բայիֆ էֆէնտիի, Իւր ներկայութեան կոչելով զՆ. Վսեմութիւն :

— Պոլսոյ մեծ վաճառատուն մը սնանկացաւ այս օրերս : Նմանապէս Ալեքսանդրիայէն լուր առնուեցաւ թէ տեղւոյն Սենատին օ անուն մեծ վաճառատունն ու դրամատունը դադրեցուցեր են իրենց վճարքն :

— Փար՝ Բօլիթիչէ Գորէսօնտէնձէ առնելով կը ծանուցանէ թէ խռովութիւնք ծագեր են Ի Բրիդրէնտ, ինչպէս նաեւ հիւսիսային Ալպանիոյ մէջ : Սելանիլէն ու Մանասթըրէն զրկուած զօրաց թիւն է՝ 3,000 :

— Եգիպտոսի համալգային դատարանաց կողմէ կարգեալ յանձնաժողով մը որոշեր է ջնջել Ալեքսանդրիոյ Յօնաց Պատրիարքին առանձնաշնորմանց մէկ քանին, որ տրուած են կայսերական հրովարտաւօր : Տեղւոյն Գայիրուն անուն յունական լրագիրը կը գանգատի այս որոշման դէմ, և ցաւ կը յայտնէ որ դատարանին յոյն անդամք եւս ստորագրած հաստատած են զայն :

— Յայտնի է թէ 95-99 տարիներու հէվալէներն դաւաճներէն մայրաքաղաքս բերուած եւ յատուկ մասնաժողովոյ մը յանձնուած էր նոցա վճարման համար եղանակ մը որոշել : Ըստ Թէրճէմանը — Հաղիգաթի մասնաւոր տեղեկութեանց, յիշեալ յանձնաժողովը կառավարիչ որ ելմոյց պաշտօնատունը մէկ մէկ ահլէ տայ Հէվալէի տէրերուն առ առաւելն 3 տարւոյ մէջ մաս առ մաս վճարելի, եւ ասոնց վճարման յատկանան նախընթաց տարիներու Պաղայէներէ գանձելի գումարներն և մաքսի համար առնելու վաճառքներու հասոյթն : Ելմոյց պաշտօնատունը Մեծ Եպարդոսին մատուցած է յանձնաժողովոյն առաջարկութիւնը :

## Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Պատրիարքական տեղապահի ընտրութեան համար, Ամեն. Ս. Պատրիարք Հօր կարծիքն իմանալու պաշտօնով՝ Վարչութեան Խառն ժողովէն կարգեալ պատգամաւորութեան՝ որ հուսկ ուրեմն այս շաբթու պիտի երթար առ Նորին Բարձր Երազմութիւնն, պէտք չէ մնացեր, Բաղաքական ժողովոյ ատենապետ Վսեմ. Սիմոն պէյի Ս. Պատրիարք Հօր հետ ըրած տեսակցութեան վրայ :

— Ազգային վարչութեան Բաղաքական ժողովն, որ այս չորեքշաբթի Ղալաթիոյ խորհրդարանը պիտի ընէր շաբաթական նիստը, և ըստ սովորութեան հրաւիրագիրք կանխաւ ուղղեալ էին առ ժողովականն, չգումարեցաւ՝ ժողովոյն ատենապետ Վսեմ. Սիմոն պէյի կողմանէ նոյն առաւօտ առ Պատրիարքական Գեր. Փոխանորդն ուղղեալ գրութեան մը վրայ :

— Կրօնական ժողովն երկուշաբթի օրը գումարեցաւ ընդ ատենապետութեամբ Գեր. Տ. Խորէն Արքեպիսկոպոսի Նար-Պէյ, և հանրային խնդրովը զբաղեցաւ :

— Երուսաղեմայ Ամեն. Տ. Եսայի Ս. Պատրիարք Հայրն, և Տարոնոյ Առաջնորդ Գեր. Տ. Գրիգորիս Արքազան՝ անցեալ շաբաթ օր, Բաղաքական ժողովոյ ատենապետ Մադսուտեան Վսեմ. Սիմոն պէյի ընկերակցութեամբ դատական պաշտօնատունն երթալով՝ տեսակցեցան դատական ու կրօնական նախարար Վսեմ. Հասան Ֆէհմի փաշայի հետ : Նորին Վսեմութիւնն ամենայն մեծարանօք ընդունելով զիրենք, խոստացեր է՝ քանի մ'օրէն գոհացուցիչ տնօրէնութիւններ հաղորդել թէ՛ Երուսաղեմայ պարտուց և թէ՛ Տարոնոյ առաջնորդական խնդրոց համար :

— Բաղաքական ժողովոյ ատենապետ Վսեմ. Սիմոն պէյ Մադսուտեան, նոյն օրը Մեծ Եպարքոսին հետ ալ պատրիարքական խնդրոյն վրայ տեսակցեր է :

— Կը լսեմք, թէ այս օրերս Բ. Դրենն հրաման պիտի ելնէ՝ Տարոնոյ Առաջնորդ Գեր. Տ. Գրիգորիս Եպիսկոպոսի վերադարձին համար :

— Պատրիարքարանի կողմանէ յատկապէս կարգեալ պատգամաւորութիւն մը կի-

բակի օրը Ծէնէրի Յունաց Պատրիարքարանն երթալով՝ ներկայացաւ Ս. Պատրիարքին, և ամենայն սիրով ու մեծարանօք ընդունուեցաւ :

— Յունաց նորընտիր Պատրիարք Ամեն. Տ. Յովակիմ Գ. ընկերակցութեամբ Վսեմ. Արիսթարքի պէյի, չորեքշաբթի օրն այցելեց առ Ամեն. Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հայրն մեր յՈրթագիւղ : Տեսակցութիւնն յոյժ մտերմական էր, և Վսեմ. Լօղթէթ պէյը կը կատարէր թարգմանի պաշտօնը : Կրօնական ժողովոյ ատենապետ Գեր. Տ. Խորէն Արքայան Նար-Պէյ ներկայ էր սոյն տեսակցութեան օր տեւեց իր կէս ժամ : Երկու Պատրիարքունք իրարմէ բաժնուեցան համբուրիւ եղբայրական սիրոյ :

— Հանգուցեալ Եդեսեան սրբազանի փակեալ սենեակը բացողները տակաւին չեն գտնուեր : Գողցեր են հանգուցելոյն կնիքն, ոսկի ու արծաթ հին դրամներ, 18 լիւրա, ձեռագիր փոքրիկ գիրք մը, քանի մը ձեռագիր հեղինակութիւնները, մաս մը թուղթ. և սենեակին մէջ թողբեր են շատ մը անկարեւոր թուղթեր՝ ցան և ցիր, հին հագուստներ ու կօշիկներ, Յի չափ պարսպ սնտուկներ, կաղամար, ջրի աման, մկրատ, կազմեալ ու անկազմ հին լրագրեր և կէս սնտուկ գիրք :

— Անցեալ շաբաթ տասի չափ Բարսերդի հայ երիտասարդներ Ամերիկա երթալու համար չողքնաւ նստեր են Խլմիրէն : Ասոնք Քարբերդէն մինչեւ Խլմիր 200 ոսկիէն աւելի ծախք ըրեր են, և Ամերիկա կ'երթան դրամ չսկսելու համար : Կ'երեւի թէ այս նոր Աւետեաց երկրին իւղին ու մեղրին հոտը միայն մեր գաւառացի ազգայինք կ'առնուն :

— Պուլանդի կողմերէն Ռուսաստան գաղթեալ ազգայնոց մէկ մասն, 120 հոգի, անցեալ տարւոյ վերջերը Տիփլիսէն Պուլանդ վերադարձած ժամանակ, չարագործաց խումբ մը Ալաշկերտի և Կաղզուանայ կիրճերուն մէջ անոնց վրայ յարձակելով չորսը սպաննած, երկուքը շարաշար վիրաւորած, և կողոպտած առած էին խեղճերուն վրայ գտնուածներն, որոնք երկարժամանակեայ տաժանկի աշխատութեան արդիւնք էին, և որովք պիտի վճարէին իրենց ունեցած պարտքերը : Կողոպտեալը յայնժամ Պուլա-

նդ հասնելով՝ բողոք բարձին առ տեղական կառավարութիւնն, և Պատրիարքարանն ալ ի խնդրոյ նոցա՝ միջնորդեց չարագործները ձերբակալելու եւ կողոպտեալ գոյքն երեւան հանելու համար :

Արդ՝ մինչեւ ցայսօր այդ խեղճերուն գոհացում տրուած չլինելով, և միւս կողմանէ բաւական պարագայիւք հաստատուած լինելով թէ յարձակողն՝ Զիւլանցի ցեղէն Հասան ալա անուն անձ մ'է իւր որդւոյն եւ արբանեկաց հետ, կողոպտելոց կողմանէ քանի մ'անձինք այս օրերս Կարին կ'երթան բողոքելու եւ արդարութիւն ու գթութիւն հայցելու համար :

Անտարակոյս եմք, թէ Կարնոյ Վսեմ. Կուսակալն՝ որոյ արդարասիրութիւնն ու ժողովրդասիրութիւնն անձանօթ չեն, լսելով այս թշուառաց՝ պիտի բարեհաճի անյապաղ տնօրինել զարժանն, բացարարութիւն պահանջելով միանգամայն Պուլանդի Գայմազաւէն :

— Տիփլիսէն մեզ կը գրեն .

« Տեղւոյս ազգայնոց այն ոգեւորութիւնը չմնաց զոր ցոյց կը տային վերջի կաթողիկոսական ընտրութեան ժամանակ : Ներսէսեանք յուսատած են եւ չեն գտնար ուրիշ ընտրելի : Միւս կողմէ Կառավարութիւնն ազգային դպրոցներու մասին տուած հրամանին գործադրութիւնը խստիւ կը պահանջէ, որուն համար կը լսեմ թէ Սինօդէն պատգամաւորութիւն մը կը պատրաստուի եղեր գալու եւ Կովկասի փոխարքայ Տոնտուքոֆ իշխանէն խնդրելու, որպէս զի՝ այս դպրոցական խնդիր առ այժմ յետաթողուի մինչ ցընտրութիւն Կաթողիկոսի : Ձենք գիտեր թէ ո՛ր աստիճան ստոյգ է այս լուր » :

— Ելեմտից պաշտօնատան վերաքննութեան ատենի նախագահ Վսեմ. Յովհաննէս Էփէնտի Չամչեան, մեր Հռովմէական ազգայնոց նշանաւորներէն մին, որ բաց այլ և այլ պետական կարեւոր պաշտօններէ, առեւտրական եւ հանրօգուտ շինութեանց նախարարի պաշտօններն ալ վարած է, չորեքշաբթի երեկոյ կնքեց իւր մահկանացուն ի հասակի 65 ամաց : Յուղարկաւորութեան հանդէսը կատարուեցաւ ուրբաթ ի Ս. Ռուկեբեան Եկեղեցին Բերայի, մեծ չքով :

— Տիփլիսի Հայ լրագրաց մէջ տեսանք հետեւեալ պաշտօնական գիրն :

« Ի կուսակալէ քաղաքական մասին կովկասու առ Լուսաւորչական Հայոց Սինօզն Ս. Էջմիածնի .

« Ներքին գործոց նախարարին ի 25ն օգոստոսի ամենախոնարհաբար մատուցած տեղեկագրոյն վրայ , Թաղաւոր - Կայսրն անվաւեր համարած է մայիս 3ին և 9ին տեղի ունեցած Հայոց Հայրապետական Աթոռոյ Կանտիտադներու ընտրութեան գործողութիւնը . ուստի և Բարձրագոյն կամօքը բարեհաճած է հրամայել որ գրուի Էջմիածնայ Սինօզին՝ այդ բանին համար՝ նորէն չըջարեալական ծանուցագրեր յղելու թէ՛ Ռուսիոյ և թէ՛ արտասահմանի բոլոր Հայոց Առաջնորդական վիճակաց , առաջարկելով սոցա որ յուղարկեն իրենց պատուիրակներն վասն նորոգ կաթողիկոսական ընտրութեան զոր հարկ է նշանակել յառաջիկայ 1885 տարւոյ գարնան մէջ :

« Հաղորդելով Սինօզիդ սոյն կայսերական բարձրագոյն հրամանը , կ'առաջարկեմ որ այս անօրէնութիւնը կատարէք անյապաղ , միանգամայն ի նկատի ունելով այն , զի թէ՛ վիճակային պատուիրակաց ընտրութեան և թէ՛ չըջարեալական ծանուցագրոց առաքման վերաբերեալ գործողութեանց մէջ՝ իսկութեամբ պահպանուին բոլոր այն կարգերն ու կանոններն՝ որք վերջին մայիս ամսոյն Էջմիածին կատարուած Հայրապետական ընտրութեան ժամանակ հաղորդուեցան Սինօզիդ :

« Առ այս կարեւոր կը դատեմ յաւելուլ նաեւ իմ կողմէն՝ զի աւելի յարմարագոյն կը լինի որ նորոգ Կաթողիկոսի ընտրութիւնը նշանակուի ասորիլ ամսոյ մէջ , սոյն եղանակին յաջող և նպաստաւոր պայմանացն համար . այսու հանդերձ վերջնական և մերձաւոր անօրէնութեան իրաւունքը կը տամ Սինօզիդ՝ որոշել և նշանակել յստակօրէն չըջարեալական ծանուցագրոց մէջ՝ ընտրութեան իսկական օրն : »

Գեներալ Առիւտանդ Կնեազ  
ՏՕՆՏՈՒՔՈՅ ՔՕՐՍԱՔՕՅ

17 Սեպտ. 1884

Ի Տփլիս

## ՎԵՐՋԻՆ ՀԵՌՄԻՐԱՆՈՒՐԲ

ՔՈՒՆԵՐԱՆ Ի ՅՐԱՆՍԱՍ

Մարտիկա , 30 հոկտ.

Առողջապահական վարչութիւնն այսօր սկսաւ մաքուր անցագիր տալ մեկնող շրջեշաւուց : Այս կերպով բազմաթիւ անցագրեր տրուեցան :

ՅՐԱՆՔՕ-ՉԻՆՍԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Հանոյ , 29 հոկտ.

Թույլէն—Բուսնիկի Ֆրանսական պոհապան զօրքն հոկտեմբեր 14էն 19 յետս մընց բանի մը չինական յարձակումներ :

ՔՈՒՆԵՐԱՆ ՅԻՏԱՆԻՍ

Հռոմ , 30 հոկտ. եր.

Այսօր 6 հոգի մեռան քոլերայէ ի նաւուրի և 5 հոգի զանազան տեղեր :

ՍՈՒՏԱՆԵՆ ԼՈՒՐԵՐ

Տոնկուա , 28 հոկտ.

Սուրհանդակը , որք զրկուած էին այն տեղն ուր Սդուարդ գնդապետը Պէտէվիներէն սպաննուեցաւ , աստ վերադարձան և հաստատեցին գնդապետին և իւր ընկերաց ջարդը :—Աստ հասած տեղեկութիւնք կը ծանուցանեն , թէ լորտ Ուոլլի և իւր թաղալոյսը Սարրաս հասեր և անմիջապէս Ամպիկոլ գացեր են :

Գահիրէ , 28 հոկտ.

Սուտանի գործոց վերաբերեալ Կապոյթ Տեպրալը Կորտոն զօրավարին մէկ հեռագիրը կը սարունակէ , ծանուցանող թէ անկարելի է իրեն Խարդումէն մեկնիլ առանց աջակցութեան բրիտանական կառավարութեան : Լորտ Ուոլլի զօրավարն արդէն ընդունեց հարկ եղած հրահանգներն օգնութեան երթալու , և ազատելու Կորտոն զօրավարն և Սդուարդ գնդապետը , բայց ասկէ աւելի զինուորական գործողութիւններ արգիլուեցան Ուոլլի զօրավարին :

Լանտոն , 28 հոկտ.

Անգլիական և եգիպտական կառավարութիւնք կը մերժեն կառավարել Վատի-Հալիայի հարաւակողմը (դէպ ի Սուտան) գտնուած երկիրները :

## ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏՈՒՅ

ՄԻԱՅՈՒՄՆ ՕՍՄԱՆԵԱՆ ԱՐԺԵԹՂԹՈՅ

### Ա. Զ. Դ.

Օսմանեան Հանրային Պարտուց՝ միացման համար կնքեալ (էսթաթէէ) արժէթղթոց՝ Միացեալ Պարտուց նոր արժէթղթոց հետ փոխանակութիւնը տեղի պիտի ունենայ ի Կ. Պոլիս, 1884 նոյեմբեր 20էն սկսեալ Օսմանեան Կայսերական Պանքային մէջ, համաձայն հրամանագրոյն որ ի 8/20 դեկտեմբերի 1884 :

Արձանագրեալ (անբէթէ) արժէթղթը կրնան փոխանակութեան ենթարկուիլ, իսկ ո՛չ արձանագրեալ և ո՛չ ալ կնքեալ արժէթղթը պէտք է արձանագրուին կամ կնքուին, Փոխանակութեան (սթաթէ) համար 1885 փետրուար 13էն առաջ :

Արժէթղթոց կնքման գործողութիւնը պիտի դադրի 1885 փետրուար 13ին, իսկ այդ թուականէն յետոյ արձանագրութիւնը տիղի պիտի ունենայ համաձայն այն կանոնաց որք Վարչական Խորհրդոյ կողմէ պիտի հաստատուին :

Մինչեւ 1885 փետրուար 13 ոչ արձանագրեալ և ոչ կնքեալ արժէթղթոց կտրոններն իրենց բոլոր արժէքը պիտի կորսնցնեն :

Միացեալ Պարտուց նոր արժէթղթը 1885 մարտ ամսոյ կտրոնը պիտի կրեն, և միմիայն նոր արժէթղթը ինչպէս նաեւ արձանագրեալ արժէթղթը իրաւունք պիտի ունենան այդ և յաջորդ կտրոններուն վրայ նշանակեալ տոկոսին :

Բացառելով արժէթղթը պէտք է ար-

ձանագրուին իրենց Միացումէն առաջ :

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել արժէթղթոց Միացման յատուկ Վարչութեան :

### ԼԷԴԱԻՖԻ ԱՍՍԻ

ԳԵՂԵՅԻԿ ԳՐՈՒԱԾՔ

Գրեց և Հաւաքեց

ՄԷՆԻՆ ԱՔԷԼԵԱՆ

Բարոյական, Նկարագրական, Գիտական և Պատմական հատուածներ, Առակներ, Զուարճալիք, Հանելուկներ, այլ և այլ Մուրհակներ, Պայմանագրեր, Նամակներ և Աղերսագրեր :

Կը ծախուի Հայ գրավաճառաց և Պահ-ճէ-Գարու ջրավաճառ Պօղոս և Յակոբ աղաներու քով : Գին 100 փարպ :

### ՀԱՅ ԹԻՅԱՎԱՃԱՌ

ԷԹԱՆԴ ԳՐԱՅ, ՄԷՆԻՆԻ ՏԵՊ, ԸՆԴ 70

Այս վաճառատուն՝ որ մէկ տարիէ աւելի ժամանակէ հետէ իւր յաճախորդները դոհացներու ջանք չէ խնայած, կը ծանուցանէ թէ Զինաստանի և Ճաղայի բերքերէն այս անգամ զանազան տեսակ ընտիր թէյեր (չայ) բերել տուած է յատկապէս, եւ կը խնդրէ սիրելի ազգայիններէ, մանաւանդ գաւառացի Հայ Ժողովուրդներէ որպէս զի հաճին գէթ միանգամ ի մօտոյ տեսնել իւր սպորանքներն և փորձել թէ՛ տեսական լուծութիւնը, եւ թէ՛ գիներու աժանութիւնը :

### ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԵԼԼԵՆԱԿԱՆ ԱՐԴԻ ԼԵՁՈՒԻ

Բաժանեալ ի յիսուն և հինգ դասս

Յօրինեալ ըստ նորագոյն գրութեան

Ի պէտս հայկազն ուսանողաց

Ի ՏԻՄԻԹՐԻՈՍ ԶՈՒՆԵԱՆԷ

Գին 10 դահեկան

Կը գտնուի բոլոր Հայ գրավաճառաց քով :

## Օ ԳԱՄԻԼԻԱ

Վաճառատունը պատիւ ունի  
ծանուցանել հասարակութեան թէ  
իւր փոխադրութեան առթիւ ի

194, ԲԵՐԱՅԻ ՄԵԾ ՓՈՂՈՅՆ

Կալամա-Սէրայի դիմաց

Ի ՎԱՃԱՌԻ կը հանէ ՅՈՅԺ ԱԺԱՆ  
ԳՆՈՎ Իւր հաստատութեան մէջ  
գտնուած բոլոր ապրանքներն, ու  
րոց միացած են դեռ նոր հասած  
ապրանքներ, ամենքն ալ վերջին  
նորաձեւութենէն, և Փարիզի ա-  
ռաջին գործարաններէն ելած :

Այս ԱՐՏԱՍՈՎՈՐ ՎԱՃԱՌՈՒՄՆ  
որ տեղի պիտի ունենայ ԳԱՄԻ-  
ԼԻԱՅԻ վաճառատեղին, Հաճորու-  
լոյ անցք, թիւ 8, և որ գեղեցիկ  
առիթ մը կը մատակարարէ, պիտի  
սկսի Նոյեմբեր 3ին, և միայն ՄԷԿ  
ԱՄԻՍ պիտի տեսէ, որով յետոյ  
վաճառատունը վերջնապէս պիտի  
փոխադրուի իւր նոր տեղն, վե-  
րոյիչեալ հասցէով

## Օ ԳԱՄԻԼԻԱ

## ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

Քիւրճ-ԳԱՐՈՒ, Թիւ 3 վաճառա-  
տան մէջ մեծ և փոքր քանակութեամբ  
կը վաճառուին հետեւեալները :  
Հանքածուխ, Նիթրատ և ՔԱՐՏԻՖ  
Ձուլի երկաթ, ՔԱՆՏԷՐ — թիւ 1.  
Հանքածուխ, ՔՕՔ :  
Տոկուն աղիւս, ՔՕՎԷՆ :

Բոլոր այս ապրանքներն ընտիր տե-  
ռակէ են և ԽԻՍՏ ԱԺԱՆԳՆԵՐՈՎ կը վա-  
ճառին :

## ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ստորագրեալ պատիւ ունի  
ծանուցանել Արգոյ Հասարա-  
կութեան թէ, յառաջիկայ 1885  
տարւոյ Ս. Փրկչի Ազգ. Հի-  
ւանդանոցին սեփականեալ ըն-  
դարձակ օրացոյցին մէջ պիտի  
զետեղուին ամէն տեսակ ազ-  
դեր իբր յաւելուած :

Ներկայ ծանուցմամբ կը հը-  
րաւիրուին վաճառականք, գոր-  
ծարանատեարք, սեղանաւորք,  
արհեստաւորք, դեղագործք,  
փաստաբանք, այլ և այլ ընկե-  
րութեանց Կ. Պօլսոյ գործա-  
կալք, զանազան հաստատու-  
թեանց վարիչք և առևտրական  
ամէն ճիւղերու վերաբերեալ  
անձինք, որ կը փափաքին իւր-  
եանց գործոց վրայ ազդարա-  
րութիւն ընել յիշեալ ընդարձակ  
օրացոյցին մէջ՝ դիմել առ

Գ. ՊԱՂՏԱՏԷԱՆ

Տնօրէն Արամեան տպարանի,  
Յակօբեան խան, թիւ 13

Ազդարարութիւնք պիտի ըն-  
դունուին մինչեւ յառաջիկայ  
նոյեմբեր 10 :

Պայմանք գործացուցիչ են :

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ